2023

# ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՅՐՄԱՆ ԿԱՅԱՆՔ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ

ՀՀ ք. Մասիս արդյունաբերական հանգույց, Երկաթուղայինների 4

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

# ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՅՐՄԱՆ ԿԱՅԱՆՔ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Ասատրյան

Ա/Ձ Արամ Գալոյան

Երևան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ձեռնարկողի մասին տեղեկություն ....5

Հապավումներ ....5

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....6

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ ....7

3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿ ....10

3.1 Գործունեության ենթակա տարածքի առկա վիճակի նկարագիր ....10

3.2 Վնասազերծվող թափոնների բնութագրերը ....11

3.3 Տեխնիկական ցուցանիշների հակիրճ բնութագիրը /ներկա վիճակ/ ....14

3.4 Արտադրական տարածք ....14

4. Ընտրված կայանքի բնութագիր ....18

4.1 Տեխնիկական ցուցանիշների հակիրճ բնութագիրը /հեռանկար/ ....18

4.2 Բժշկական վտանգավոր թափոնների վնասազերծման գործընթաց ....19

4.3 Օգտագործվող բնառեսուրսները և նյութերը ....21

4.4 Թափոնների գործածության հետ կապված աշխատանքի հիգիենայի և անվտանգությանը վերաբերվող հարցեր ....23

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ....26

5.1 Դիտարկվող տարածշրջանի ֆիզիկա-աշխարհագրական դիրքը ....26

5.2 Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները ....26

5.3 Տարածաշրջանի հողերի նկարագիրը ....29

5.4 Կլիման և օդերևութաբանական պայմանները ....31

5.5 Օդային ավազան ....35

5.6 Բուսական և կենդանական աշխարհը ....36

5.6.1 Բուսական աշխարհը ....36

5.6.2 Կենդանական աշխարհ ....37

5.7 Պատմամշակույթային հուշարձաններ ....37

5.8 Ջրային ռեսուրսներ ....38

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ....40

6.1 Օդային ավազան ....40

6.2 Սանիտարապաշտպանիչ գոտի ....40

6.3 Արտադրական թափոններ ....40

6.4 Սոցիալական ազդեցությունը ....41

6.5 Հնարավոր հոտի ազդեցությունը ....41

6.6 Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն ....41

7. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ........ 42

7.1 Մթնոլորտային օդ ........ 42
7.2 Ջրային ռեսուրսներ ........ 42
7.3 Հողային ռեսուրսներ ........ 42
7.4 Կենսաբազմազանություն ........ 43
7.5 Աշխատանքի անվտանգություն ........ 43
7.6 Փոխհատուցում ........ 44
7.7 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիրը արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում: ........ 44

8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ ........ 45

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ........ 48

**Ձեռնարկողի մասին տեղեկություն**

| | |
|---|---|
| 1.2 Ձեռնարկող՝ | **«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ** |
| 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝՝ | ՀՀ ք. Երևան, 0009, Աբովյան փողոց 42, բն. 2 |
| 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ | ՀՀ ք. Մասիս արդյունաբերական հանգույց, Երկաթուղայինների 4 |
| 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ | ՀՀ Արարատի մարզ ք. Մասիս |
| 1.6 Հեռախոս՝ | +374 99994222 |
| 1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ | - |

**Հապավումներ**

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բժշկական թափոնները կարող են ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ և վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար: Այս կարգի թափոնները կենսաբանական, ֆիզիկական, քիմիական վտանգ են ներկայացնում նրանց համար, ովքեր մասնակցում են թափոնների գործածության գործընթացին: Թափոնները սպառնում են հանրային առողջության անվտանգությանն այն դեպքում, երբ մարդիկ, այդ թվում երեխաները, շփվում են չվնասազերծված թափոնների հետ: Բացի այդ, վնասազերծման ոչ լիարժեք մեթոդները նույնպես կարող են խնդիրներ առաջացնել հանրային առողջության համար և աղտոտել շրջակա միջավայրը: Թափոններ առաջացնող և թափոնների հետ գործ ունեցող կազմակերպությունները պատասխանատու են իրենց թափոնների համար՝ գոյացման պահից մինչև դրա վերջնական հեռացումը:

«Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության կողմից շահագործվում է ժամանակակից թափոնների այրման հանգույց: Գործունեությունը իրականացվում է Արարատի մարզ Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույց Երկաթուղայինների 4 հասցեում, թափոնների այրման հանգույցը թույլ է տալիս բարձր արդյունավետությամբ և պահպանելով բոլոր սանիտարական պահանջները իրականացնել բժշկական թափոնների վնասազերցում՝ ջերմային ոչնչացման եղանակով:

Ընկերությունը 2020թ. ենթարկվել է բնապահպանական փորձաքննության և Շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ000012 եզրակացությունը և NՎԹ000002 ՀՀ վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա:

Ընկերությունը որոշում է կայացրել ընդլայնել գործունեությունը և գործող ИНСИ B-300 մակնիշի այրման հանգույցը փոխարինել ավելի հզոր ECO-4000 այրման հանգույցով, ինչը թույլ կտա այրել ավելի մեց ծավալի կլինիկական թափոն:

Նախատեսվող գործունեության նպատկն է իրականացնել «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերությանը պատկանող Աստղիկ ԲԿ-ի և այլ բժշկական կենտրոնների գործունեության ընթացքում առաջացող բժշկական թափոնների ջերմային վնասազերցում:

Համաձայն "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի՝ "վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտագործում, մշակում, վերամշակում, հեռացում, վնասազերծում, տեղադրում, թաղում" գործունեության տեսակները դասվում են „Ա“ կատեգորիայի շարքին և ենթակա են բնապահպանական փորձաքննության:

Այրման հանգույցի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության

մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեւոյան իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Մասիս քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

## 2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

***ՀՀ Սահմանադրություն*** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

***«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ*** օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման "հայեցակարգերի" պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

***«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք*** (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ 121) ենթակետը ձևակերպել հետևյալ կերպ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

***«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)*** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

***«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը*** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

***«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)*** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

***«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք*** (2005) - կարգավորում

է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

***«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք*** (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

***«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք*** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Նախագծման համար ուղեցույց ծառյել նաև հետևյալ հետևյալ իրավական ակտերը.

*- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),*

*- ՀՀ Ջրային օրենսգիրքը (ՀՕ-373, 04.06.2002թ.)*

*- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),*

- *«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),*
- *ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01,2010թ.–ի Ա71-Ն որոշում,*
- *ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.–ի Ա72-Ն որոշում,*

- *ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» հ1 967-Ն որոշում,*
- *ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059–Ա որոշում,*
- *«Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.–ի N 781-Ն որոշումը*
- *«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:*
- *ՀՀ առողջապահության նախարարի 4 մարտի 2008 թ. N 03-Ն հրաման «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.1.3-3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»*

## 3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿ

### 3.1 Գործունեության ենթակա տարածքի առկա վիճակի նկարագիր

Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույց, Երկաթուղայինների 4 հասցեում:

Գործունեությունը իրականացվում է գոյություն ունեցող շինությունում, վարձակալական հիմունքներով, տարածքի վարձատուն հանդիսանում է «Էլեկտրամեքար» ՓԲ ընկերությունը: Վարձակալված տարածքի մակերեսը կազմում է 433 քմ:

«Էլեկտրամեքար» ՓԲ ընկերությանը պատկանաող տարածքի ֆունքցիոնալ նշանակությունը պահեստային է, այս պահին տվյալ տարածքում որևը այլ գործունեություն չի ծավալվում:

Տարածքում առկա են խորհրդային տարիներից չշահագործվող տարբեր շինություններ, մասնավորապես՝ 58367.67քմ շենք շինություններից՝ 229.9քմ տրասնպորտային բաժին, 511136քմ վարչական շենք, 895.5քմ ճաշարան, 41500.6քմ պահեստ, 2881.2քմ պահեստ, 1544.6քմ մեխանիկական ցեխ, 1543քմ պահեստ, 950.9քմ լիցքավորման կետ, 370.5քմ պահեստ, 22.56քմ տեղամասային կետ, 34քմ կշռատուն, 47.52քմ պահակային շների պահպանման շենք, 8.08քմ պահակատուն, 19.19քմ

գործիքների պահպանման սենյակ, 57.92քմ ենթակայան, 12.32քմ պահակատուն, 73.6քմ պոմպակայան, 17քմ տեղամասային կետ, 77.68քմ փակ ջրավազան, 74.8քմ պոմպակայան, 42.08քմ հրշեջ կետ, 68.8 ավտոտնակ, 52.4քմ երթակարգավորման կետ, 8.24քմ պահակատուն, 18.72քմ տեղամասային կետ, 870քմ ավտոմեքենաների Տ.Ա.Կ., 262քմ վարչական շենք, 133.12քմ կենցաղի տուն, 75.12 ավտոտնակ, 32.8քմ պահեստ, 19.2քմ տեղամասային կետ, 42.48 տեղամասային կետ, 98.88քմ ջրավազան, 139.84քմ ենթակայան, 18.72քմ պահակատուն, 29.04քմ տեղամասային կետ, 200.16քմ կարի արտադրամաս, 143.6քմ ծածկ, 540քմ պարիսպ:

Ներկայացված տարածքի հարևանությամբ առկա է չգործող բետոնի շաղախի պատրաստման հանգույց, թթվածնի գործող արտադրամաս:

Տարածքում հիմնականում գրունտային ճանապարհներ են, տեղ տեղ ասֆալտապատված:

Տարածքում առկա է աննկանոն աճած բուսականություն, մասնավորապես՝ առվույտ:

Համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի (կադաստրային համար 03-082-201-010) հողատարքծի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, օգտագործման նպատակը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

### 3.2 Վնասազերծվվող թափոնների բնութագրերը

***Բժշկական թափոններ***՝ կազմակերպություններում պացիենտների հետազոտության, բուժման, բուժկանխարգելիչ աշխատանքների կամ գիտական հետազոտությունների արդյունքում առաջացած թափոններ, որոնք բաժանվում են՝

1) վարակիչ թափոնների, որոնք իրենց հերթին դասակարգվում են՝

ա. միկրոկենսաբանական թափոններ - լաբորատոր աշխատանքի համար նախատեսված վարակիչ հիվանդությունների հարուցիչների կուլտուրաներ և շտամներ, վիրահատական և վարակիչ հիվանդություններից մահացածների դիահերձումներից առաջացած թափոն (հյուսվածքներ և առարկաներ կամ սարքավորումներ, որոնք շփվել են արյան կամ կենսաբանական այլ հեղուկների հետ), վարակիչ հիվանդներից առաջացած թափոն (արտաթորանքներ, վարակված կամ վիրաբուժական վերքերի վիրակապեր, մարդու արյամբ կամ կենսաբանական այլ հեղուկներով աղտոտված հագուստ), հեմոդիալիզ ստացող հիվանդների հետ շփումից առաջացած թափոն (դիալիզի խողովակներ, ֆիլտրեր, միանվագ օգտագործման սրբիչներ, խալաթներ, ձեռնոցներ և լաբորատոր խալաթներ), լաբորատորիաներում փորձարարական աշխատանքների համար վարակված կենդանիների դիակներ, ցանկացած միանվագ օգտագործման գործիք կամ առարկա, որը շփում է ունեցել վարակված մարդկանց կամ կենդանիների հետ.

բ. ախտաբանաանատոմիական թափոններ - վիրահատության, դիահերձման և այլ գործընթացների ընթացքում հեռացված հյուսվածքներ, օրգաններ, մարմնի

մասեր, արյուն, կենսաբանական հեղուկներ, նաև վիժումների զանգվածներ, կենդանիների դիակներ (սատկած կենդանու լեշ).

գ. կենսաբանական հեղուկներ - հեղուկներ, որոնք իրենց մեջ կարող են վարակիչ հիվանդությունների հարուցիչներ պարունակել, արյուն, արյան բաղադրամասեր, ավիշ, սերմնահեղուկ, հեշտոցի արտազատուկներ, ողնուղեղային, ձուսպային, թոքամզային, որովայնամզային, հարսրտային պարկի և հարպտղային հեղուկներ: Կենսաբանական հեղուկներով աղտոտված առարկաներ, նյութեր, փափուկ գույք.

դ. սրածայր թափոններ - կրկնակի օգտագործման կամ վերամշակման ոչ ենթակա ներարկիչներ, ներարկման ասեղներ, կարեր դնելու ասեղներ, վիրադանակներ և այլ սայրեր, նշտարներ, սղոցներ, դանակներ, կոտրված կամ չկոտրված ապակի, սրվակներ, մեխեր և այլն.

2) քիմիական թափոններ - ախտորոշիչ և /կամ փորձարարական գործունեությունից առաջացած կիրառման և օգտագործման ոչ ենթակա քիմիական նյութեր, ինչպես նաև մաքրման, ախտահանման և այլ գործընթացների ընթացքում առաջացող նյութեր, որոնք ունեն հետևյալ հատկություններից առնվազն մեկը.

ա. թունավոր/տոքսիկ,

բ. քայքայիչ՝ թթուներ Ph < 2.0 և հիմքեր Ph >12,

գ. դյուրավառ,

դ. ռեակտիվ՝ պայթուցիկ, ջրի նկատմամբ ռեակտիվ, ջերմության նկատմամբ զգայուն քիմիական նյութեր,

ե. ցիտոստատիկ դեղեր, այդ դեղերով բուժվող հիվանդների արտաթորանքներ (մեզ, կղանք, փսխման զանգված և այլն).

3) դեղագործական թափոններ - ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղեր, պատվաստանյութեր, շիճուկներ և դեղագործական այլ ապրանքներ:

Նշված թափոնները դասվում են վտանգավոր թափոնների շարքին, ուստի դրանց վնասազերծման գործունեությամբ զբաղվելը ենթակա է լիցենզավորման, որը համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N21-Ն որոշման տրամադրում է շրջակա միջավայրի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝ փորձաքննական եզրակացության հիման վրա:

Նախատեսվող բժշկական թափոնների վնասազերծման գործունեությունն ունի իր կարևորությունը՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ առողջապահական տեսանկյունից, քանի որ վերջինիս իրականացումը կարող է նպաստել վտանգավոր թափոնների հեռացման և տեղադրման հետ կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության և մարդու առողջության հետ կապված հիմնախնդիրների լուծմանը:

«ԱՍՏՂԻԿ» ԲԿ-ի գործունեության ընթացքում առաջանում են վերը նշված բժշկական/կլինիկական թափոնները, որոնց համար, համաձայն գործող օրենսդրության պահանջների, մշակվել և սահմանված կարգով հաստատվել են թափոնների անձնագրեր: Ըստ այդ անձնագրերի կազմակերպությունում առաջանում են հետևյալ այրման ենթակա թափոնատեսակները.

Աղյուսակ 3.2. Առաջացող թափոնների տեսակները և քանակները

| N | Թափոնատեսակի անվանում | Ծածկագիրը | Տարեկան քանակը, տ/տարի |
|---|---|---|---|
| | Մարմնի և ներքին օրգանների մասեր | 9701030001054 | 2 |
| | Գործածված միանվագ ներարկիչներ | 9701080013053 | 2 |
| | Բժշկական ասեղներ՝ փչացած կամ օգտագործված | 9701070001054 | 0.4 |
| | Բժշկական թափոններ, որոնք առաջանում են առողջապահական ծառայությունների արդյունքում /ախտորոշում, կանխարգելում, բուժում, ծննդաբերություն/ | 9701060001054 | 20 |
| | Փողակներ, սուր առարկաներ (նշտար, հերձադանակ) | 9701050001994 | 0.4 |

Այրման հանգույցում բացառվելու է առողջապահական կազմակերպություններից սնդիկ պարունակող սարքավորումների, ֆորմալդեհիդի և նյութերի ընդունումը, քանի որ դրանք հանդիսանում են վտանգավոր բժշկական թափոններ:

ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելվածների պահանջներով առողջապահական կազմակերպություններից վտանգավոր քիմիական թափոնների և նյութերի հեռացումը յուրաքանչյուր առողջապահական կազմակերպության կողմից իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելվածների համաձայն: Կազմակերպությունը հետևում է վտանգավոր բժշկական թափոնների շարժին՝ կազմակերպության ներսում դրա գոյացման վայրից մինչև կազմակերպության ներսում կամ դրսում դրա վերջնական հեռացումը: Սա կատարվում է կազմակերպության յուրաքանչյուր բաժանմունքում՝ այս գործողությունը կատարելու համար նշանակված մի աշխատողի կողմից կամ մի քանի աշխատողների միացյալ ջանքերով: Մեկ լրիվ աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ աշխատողը զննում է, թե որտեղ են առաջանում թափոնները, կազմակերպության ներսում որտեղ են փոխադրվում մինչև դրանց վերջնական հեռացումը:

### 3.3 Տեխնիկական ցուցանիշների հակիրճ բնութագիրը /ներկա վիճակ/

Ներկա դրությամբ ընկերության կողմից շահագործվում է Ինսիպրոմ ընկերության արտադրության ИНСИ В-300 մակնիշի այրման հանգույցը:

Արտադրող ձեռնարկության անվանումը և հասցեն.

<u>**ՌԴ ք. Կրասնոդար, Ֆաղենի փ. տ.429, գրաս. 33**</u>

ИНСИ В-300 կայանքը գործում է պիրոլիզի եղանակով:

Համալիրը կահավորված է հիմնական այրման և լրաայրման խցերով:

**Կայանքի տեխնիկական բնութագիրը**

- Տեսակ (մակնիշ)՝ ИНСИ В-300
- Այրման խցի տարողություն՝ 600լ
- Բեռնվածքի ծավալը՝ մինչև 300կգ
- Այրման հզորությունը՝ 50կգ/ժամ
- Վառելիքի տեսակ, ծախս՝ գազ, 30 Նմ$^3$/ժամ առավելագույնը
- Բեռնում՝ Ձեռքով, դռան միջով (դռնով)
- Վառարանի չափսերը՝
- Երկարություն՝ 2.19մ
- Լայնություն՝ 1.26մ
- Բարձրությունը՝2.2մ
- Վառարանի քաշը՝ 1300 կգ
- Ծխատար խողովակ՝ H = 9մ, D = 0.5մ

Համաձայն թափոնների այրման կայանքը տեխնիկական անձնագրի բնութագրի վառարանը կահավորված չէ ֆիլտրերով:

Համալիրի ժամային արտադրողականությունը մինչև 50 կգ/ժ, մեկ բեռնումը՝ մինչև 300կգ, վնասազերծման մեկ ցիկլը՝ 6 ժամ:

Լիարժեք ծանրաբեռնվածության դեպքում տարեկան առավելագույն արտադրողականությունը կազմում է 36 տ/տարի:

### 3.4 Արտադրական տարածք

«Նատալի ֆարմ» ՍՊԸ ընկերության կողմից վարձակալված շինությունը գտնվում է տարածքի կենտրոնական մասում:

Տարածքը գտնվում է Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույցում. Մոտակայքում բնակելի տները բացակայում են: Թափոնների վնասազերծման կայանքի

անմիջական հարևանությամբ բնակելի տներ չկան: Մոտակա բնակելի տունը գտնվում է 320 մ հեռավորության վրա:

Արտադրական շինությունը վերանորոգվել է և համապատասխանեցվել է նախատեսվող գործունեության համար: Տարածքում կա սանհանգույց, ցնցուղարաններ, սառնարանային տիպի պահեստային տարածք 72քմ (թափոնների անվտանգ պահումն ապահովելու համար) և գրասենյակ:

Պահեստային տարածքն ապահոված է ջրի ծորակներով և ջրահեռացման գծով, պատերն ու առաստաղն ունեն անջրթափանց ծածկույթ:

Արտադրական տարածքն ապահոված է օդափոխման և հակահրդեհային համակարգերով:

Տաք ջրամատակարարման համար տեղադրված է BOSCH մակնիշի պատային կաթսա:

Ստորև ներկայացված են տարածքի գլխավոր հատակագիծը և արտադրական շենքի իրադրային սխեման:

## Գլխավոր հատակագիծ



## Իրադրային հատակագիծ

ՀԱՏԱԿԱԳԻԾ



4. Ընտրված կայանքի բնութագիր

## 4.1 Տեխնիկական ցուցանիշների հակիրճ բնութագիրը /հեռանկար/

Բժշկական թափոնների վնասազերծման համար ընտրվել է ջերմային եղանակը, որը թույլ է տալիս գործնականում ամբողջությամբ ոչնչացնել այդ կարգի թափոնները:

Նման պահանջներին լիովին բավարարում է ECO - 4000 մակնիշի այրման հանգույցը:

Արտադրող ձեռնարկության անվանումը և հասցեն՝

ՌԴ ք. Իժևսկ, 14-րդ փողոց, 141Բ

ECO-4000 կայանքը գործում է պիրոլիզի եղանակով:

Համալիրը կահավորված է հիմնական այրման և լրաայրման խցերով:

**Կայանքի տեխնիկական բնութագիրը**

- Տեսակ (մակնիշ)՝ ECO - 4000
- Այրման խցի տարողություն՝ 10մ$^3$
- Բեռնվածքի ծավալը՝ մինչև 4400կգ
- Այրման հզորությունը՝ 280-420կգ/ժամ
- Վառելիքի տեսակ, ծախս՝ գազ, 11-14 Նմ$^3$/ժամ առավելագույնը
- Վառարանի չափսերը՝
- Երկարություն՝ 5.6մ
- Լայնություն՝ 2.4մ
- Բարձրությունը՝2.6մ
- Վառարանի քաշը՝ 17000 կգ
- Ծխատար խողովակ՝ H = 12մ, D = 0.82մ
- Այրման ջերմաստիճան՝ 760-870 C$^0$

Համալիրը կահավորված է հիմնական այրման և լրաայրման խցերով:

Համաձայն թափոնների այրման կայանքի տեխնիկական անձնագրի բնութագրի վառարանը կահավորված չէ ֆիլտրերով:

Վառարանի արտաքին տեսքը. Նկար 1



Рисунок 1 – Вид инсинератора

Լրացյրման խցում ջերմաստիճանը հասցվում է 1000⁰C, ինչը թույլ կտա ամբողջությամբ վնասազերծել բոլոր օրգանական միացությունները:

## 4.2 Բժշկական վտանգավոր թափոնների վնասազերծման գործընթաց

Բժշկական վտանգավոր թափոնների վնասազերծման գործընթացներն նախատեսվում է իրականացնել Արարատի մարզ Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույց, Երկաթուղայինների 4 հասցեում:

Բժշկական հաստատությունից վտանգավոր բժշկական թափոնները հատուկ կահավորված ավտոմեքենաներով տեղափոխվում են թափոնների վնասազերցման կենտրոնական օբյեկտ, որտեղ թափոնների վնասազերծումն իրականացվում է հրկիզման վառարանում, որտեղ կիրառվում է բարձր ջերմային գործընթացը:

Թափոնները տեղափոխող տրանսպորտային միջոցները մուտք են գործում արտադրական մասնաշենքի ախտահանման հատված, որտեղ ախտահանվում են, որից հետո թափոնները տեղափոխվում են վառարանային տեղամաս կամ սառնարանային հանգույց:

Ախտահանումը նախատեսված է տարածքի մուտքի հատվածում, ախտահանումը կատարվում է աերոզոլների միջոցով, որի արդյունքում թափոն կամ արտահոսք չի առաջանում:

Բժշկական թափոնները տեղափոխվում են փակ հատուկ տարաների կամ հաստ պատերով պարկերի մեջ հերմետիկ փակված և պիտակավորված վիճակում:

Բժշկական թափոնները մինչև վնասազերծումը պահվում են համապատասխան սառնարանային տիպի պահեստում՝ 3-ից 6 ժամ: Պահեստային տարածքն ապահովված է ջրի ծորակներով և ջրահեռացման գծով, պատերն ու առաստաղն ունեն անջրթափանց ծածկույթ:

Ոչնչացման ենթակա թափոնները բեռնվում են հիմնական խցի մեջ: Այրման խուց թափոնները բեռնելու և կափարիչը բացելու համար նախատեսված է ձեռքի կամ էլեկտրական ճախարակ:

Ընդունված թափոնները տրանսպորտային միջոցներից կամ սառնարանային հանգույցից տեղադրվում են սայլակի մեջ և տեղափոխվում վառարանի սնուցման հարթակ, միանում են հիմնական և երկրորդ աստիճանի այրիչները և ջերմաստիճանը հնոցում հասնում է 760-870C$^{0}$, որից հետո սայլակի պարունակությունը լցվում է հնոցի մեջ: Առաջին աստիճանի հնոցը ունի կոնաձև կառուցվածք և թափոնների այրումից առաջացած պինդ մասնիկները լցվում են կոնի տակ ընդունիչ տարողության մեջ: Ծխագազերը տրվում են երկրորդ աստիճանի  հնոց, որը ունի գլանաձև կառուցվածք: Այստեղ շնորհիվ երկրորդ այրիչի, ջերմաստիճանը բարձրացվում է մինչև 1000 C$^{0}$, ինչը թույլ է տալիս  առավելագույն չափով այրել բժշկական թափոնները:

Ծխագազերը տրվում են արտաքին շապիկով խողովակ, որում հովանալով ծխագազերը ծխատարի միջոցով արտանետվում են մթնոլորտ:

Կլինիկական թափոնների այրման արդյունքում առաջանում է չոր մնացորդ /մոխիր/, որն ըստ ոլորտում կիրառվող կայանքների տեխնիկական անձնագրերի անվտանգ է, քանի որ ենթարկվում է բարձր ջերմային ազդեցության, և կարող է տեղափոխվել ընդհանուր բնույթի աղբավայրեր:

Մոխիրը դատարկվում է հետևյալ կերպ՝ սարքի անջատումից և բնական եղանակով հովացումից հետո, սարքի ստորին մասի փականի տակ տեղադրվում է ստվարաթղթե պարկ, բացվում է փականը և վառարանի պարունակություն լցվում է պարկի մեջ: Յուրաքանչյուր պարկ կարող է պարունակել մինչև 50 կգ մոխիր, սակայն աշխատանքի անվտանգության տեսակետից ելնելով, նախատեսվում է յուրաքանչյուր պարկի մեջ լցնել մինչև 30 կգ մոխիր:

Պոլիէթիլենային և այլ պլաստիկ բոլոր նյութերը այրվում են:

Մինչ վառարան տեղափոխելը մագնիսների միջոցով թափոնից հանվում են մետաղական մասերը՝ լանցետներ, ասեղներ, այլն, որոնք տեղավորվում են ստվարաթղթե արկղերի մեջ: Հաշվի առնելով մետաղական մասերի փոքր ծավալները, դրանք ժամանակավոր պահվում են նույն սենյակի անկյունում: Հավաքելով 1 – 2 արկղ, դրանք, ախտահանումից հետո, տեղափոխվում են տարածաշրջանում գործող մետաղների թափոններ ընդունող կազմակերպությունների պահեստներ:

Համալիրի ժամային արտադրողականությունը մինչև 420 կգ/ժ, մեկ բեռնումը՝  մինչև 4400կգ, վնասազերծման մեկ ցիկլը՝ 24 ժամ, ներառյալ սարքի տաքացումը և հովացումը:

Կայանքի բեռնումը կարելի է կրկնել յուրաքանչյուր 24 ժամը մեկ:

Համալիրը կաշխատի ամբողջ տարի, շաբաթական 6 օր:

Լիարժեք ծանրաբեռնվածության դեպքում ընկերության տարեկան առավելագույն արտադրողականությունը կկազմի՝ 500 տ/տարի: Համեմատության համար, ներկա այրման համալիրի ժամային արտադրողականությունը կազմում է մինչև 50 կգ/ժ, մեկ բեռնումը՝ մինչև 300կգ, վնասազերծման մեկ ցիկլը՝ 6 ժամ, առավելագույն արտադրողականությունը կազմում էր 36 տ/տարի: Հին վառարանը նախատեսվում է ապամոնտաժել:

Համալիրի շահագործման ընթացքում բացակայում է հոտի ազդեցությունը:

Բժշկական թափոնների ջերմային վնասազերծման ընթացքում կառաջանան այրման մնացորդներ (մոխիր): Ըստ նույնանման համալիրների տվյալների այրման մնացորդների քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 2 - 5 տոկոսը: Այս թափոնը ՀՀ բնապահպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածում ներկայացված է 3130180001013 ծածկագրի տակ՝ "թափոնների այրման մոխիր (այրման վառարաններ)" տողում:

Բժշկական վտանգովոր թափոնների բարձր ջերմաստիճանային այրումից առաջացած մնացորդները սանիտարահիգիենիկ տեսակետից անվտանգ են: Ընկերությունը նախկին արտադրական ծավալների համար ունի համապատասխան թափոնի անձնագիր, համաձայնեցված ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ և թափոնի տեղադրումը իրականացվում է ըստ այդ անձնագրի, բնապահպանական փորձաքննական դրական եզրակացություն ստանալուց հետո ընկերությունը կկազմի նոր թափոնի անձնագիր և օրենքով սահմանված կարգով կներկայացնի համաձայնեցման ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն:

### 4.3 Օգտագործվող բնառեսուրսները և նյութերը

Համալիրի շահագործման ընթացքում օգտագործվելու է գազ և էլեկտաէներգիա: Թափոնների այրման կայանքը շահագործվելու է միայն գազով, այլընտրանքային վառելիք չի նախատեսվում :

Գազամատակարարումը իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

Առավելագույն տարեկան արտադրողականության ժամանակ գազի տարեկան ծախսը կկազմի՝ 90000Նմ$^3$:

Անձնակազմի կենցաղային և խմելու կարիքների համար կօգտագործվի խմելու որակի ջուր: Այն ձեռք կբերվի համապատասխան ընկուրությունից պայմանագրային հիմունքներով:

Ընկերությունում առաջացող հոսքաջրերը ներքին ցանցի միջոցով ուղվում են դեպի տարածքում գոյություն ունեցող անջրթափանց սեպտիկ հոր, որը պարբերաբար կդատարկվի մասնագիտացված ընկերության կողմից:

Էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացվում է պայմանագրային հիմունքներով, տարածքում գոյություն ունեցող ենթակայանից, որը վերահսկվում է <<ՀԷՑ>> ՓԲԸ-ի կողմից

/կից պայմանագիր/:

Համալիրը սպասարկում է 5 աշխատող: Ընկերությունում ջուրն օգտագործվում է միայն տնտեսական – կենցաղային կարիքների նպատակների համար:

Ջրապահանջի հաշվարկ՝

Խմելու և կենցաղային նպատակների ջրօգտագործում

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը հաշվարկվում է հետևյալ կերպ.
Wխ.տ=(n x N+n1x N1)x T,որտեղ
n –ԻՏ աշխատողների թվաքանակն է ՝ 1 մարդ
N-ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է ՝0.015 մ³ օր /մարդ
n1 –աշխատողների (այդ թվում բանվորներ և սպասարկող անձնակազմ )թվաքանակն է 4 մարդ
N1-սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝0.025մ³ օր/մարդ
T-աշխատանքային օրերի թիվն է
Wխ.տ=(1 x 0.015+ 4 x 0.025)x 288=33.12մ³/տարի կամ 0.115 մ³/օր

Ցնցուղների ջրասպառման հաշվարկ
Q=N x n x T
Որտեղ ՝
T-աշխատանքային օրերի քանակը 288օր
n- ցնցուղների քանակը 2 հատ
N-մեկ ցնցուղի ջրօգտագործման նորման 0.375մ
Wցնց =0.375 x 2 x 288= 216մ³/տարի
Wցնց=216մ³/տարի կամ 0.75 մ³/օր

Հատակների խոնավ մաքրման ջրապահանջի հաշվարկ
Wհատ=0.0005 x S x k T
S- հատակների մակերեսն է
k-հատակների լվացման քանակն է մեկ օրում
T- տարվա ընթացքում աշխատանքային օրերի թիվն է
S=288մ , k=1 անգամ , T=288 օր
Wհատ=0.0005x288x1x288=41.5 մ³/տարի
Միջին օրական ՝0. 144 մ³/օր

Ընկերության ջրապահանջը կկազմի
Q ընդ =W խ.տ +W ցնց + Wհատ
Qընդ =33.12 +216 +41.5 = 290.62 մ³/ տարի
Qընդ = 290.62 մ³/ տարի
Առավելագույն օրական ջրածախսը կկազմի ՝ 1.009մ³/օր:

Խմելու տնտեսական ջրահեռացումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով ՝
WՋ.Հ. =W խ.տ – ԿՏ ,
Որտեղ ԿՏ խմելու –ն ջրօգտագործման կորուստն է տոկոսներով – 5%

ԿՏ խմելու =Wխ.տ x 0.05 =33.12 x 0.05 =1.656 մ$^3$/տարի
WՋ.Հ. = 33.12 – 1.656 = 31.46 մ$^3$/տարի
<u>**Ցնցուղների ջրահեռացման հաշվարկ**</u>
Ցնցուղների տարեկան ջրահեռացումը որոշվում է՝
WՋ.Հ. ցնցուղ = Wցնց- ԿՏցնց,
որտեղ ԿՏցնց – ն ջրօգտագործման կորուստն է տոկոսներով -1.5%
ԿՏ ցնցուղ =216x0.015=3.24 մ$^3$/ տարի
WՋ.Հ. խ =216 -3.24=212.76 մ$^3$/տարի

<u>Ընդամենը կորուստները կազմում են</u>՝ 4.896 մ$^3$/տարի
Ընդամենը ընկերության կեղտաջրերի արտահոսքը կկազմի՝

- 285.72 մ$^3$/տարի
- Միջին օրական՝ 0.99 մ$^3$/օր

Հատակների խոնավ մաքրման ջրօգտագործումը դասվում է անվերադարձ կորուստների շարքին և կազմում է $W_{անվերադարձ}$ = 41.5մ$^3$/տարի
Հեռացվող կեղտաջրերի կազմը բնորոշ է կոմունալ-կենցաղային կեղտաջրերի կազմին:

## 4.4 Թափոնների գործածության հետ կապված աշխատանքի հիգիենայի և անվտանգությանը վերաբերվող հարցեր

1. Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները դրանց հավաքման, ժամանակավոր պահման, փոխադրման, վնասազերծման ողջ ընթացքում պարտավոր են կրել մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ և հատուկ արտահագուստ: Ձեռնոցները հանելուց հետո ձեռքերը պետք է լվանան օճառով՝ հոսող ջրի տակ: Պատռված ձեռնոցները պետք է անմիջապես փոխարինվեն նոր, չօգտագործված ձեռնոցներով և խոտանվեն՝ բացառելով դրանց կրկնակի օգտագործումը:
2. Աերոզոլային, գոլորշացման և ցայտելու հավանականություն ունեցող բժշկական թափոնների գործածությանը մասնակցող աշխատողները պարտավոր են կրել դիմակներ, պաշտպանիչ ակնոցներ, հատուկ անջրաթափանց արտահագուստ, կոշիկներ:
3. Վարակիչ թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները պատվաստվում են համաճարակային ցուցումով՝ ընդգրկվելով նպատակային խմբում:
4. Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները պարտավոր են պահպանել անձնական հիգիենայի կանոնները:
5. Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները ենթարկվում են պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննությունների՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2003 թ. N 347-Ն և 15.07.2004 թ. N 1089-Ն որոշումների:
6. Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված անձինք թափոնների գործածության հետևանքով ստացված վնասվածքների դեպքում պարտավոր են դրա մասին անմիջապես հայտնել կազմակերպության տնօրինությանը:
7. <u>Անձնական պաշտպանություն.</u>

Բոլոր աշխատողները, որոնք վարում, փոխադրում և վնասազերծում են բժշկական թափոններ, ապահովվում են անձնական պաշտպանական հանդերձանքով: Թափոնների

աշխատողների համար անհրաժեշտ է երեք տեսակի պաշտպանական հանդերձանք.
1) Հաստ գերամուր ձեռնոցներ,
2) Հաստ ներբաններով անվտանգ կոշիկներ կամ կիսակոշիկներ,
3) Պաշտպանական հագուստ, ինչպես օրինակ՝ գոգնոցներ կամ բանվորական արտահագուստ:

8. Ամուր չվնասվող ձեռնոցները կարևոր են, որպեսզի թույլ չտրվեն սուր սայր ունեցող պարագաներից առաջացած պատառոտումներ, տաք մակերեսների կողմից առաջացած այրվածքներ, կամ շփում որևէ քիմիական կամ կենսաբանական նյութի հետ: Հաստ ներբաններով կոշիկները կամ կիսակոշիկները առաջարկում են պաշտպանություն թափված սրածայրերից, քիմիական նյութերից և սայթաքուն մակերեսներից: Պլաստիկ գոգնոցները պաշտպանում են արյան ցայտումներից և կենսաբանական հեղուկների կամ քիմիական նյութերի ցայտումներից: Հատուկ գործողությունների վրա հիմնված պաշտպանական հանդերձանքի այլ տեսակներ.
1) Աչքի և դեմքի պաշտպանություն
2) Ոտքի պաշտպանիչներ (բախիլներ), ինչպես նաև թևքի պաշտպանիչներ
3) Շնչադիմակներ
4) Լսողության պաշտպանում
5) Սաղավարտ:

9. Աչքի և դեմքի պաշտպանություն, օրինակ՝ դեմքի վահաններ և պաշտպանական ակնոցներ են պահանջվում այն դեպքերի համար, երբ աշխատողների վրա կարող են արյան, կենսաբանական հեղուկների, լուծիչների, քայքայիչ քիմիական նյութերի և այլ վտանգավոր հեղուկների ցայտումներ լինել: Սա օգտագործվում է այն աշխատողների կողմից, որոնք խոտանում են ազատ հոսող արյունը և կենսաբանական հեղուկները կեղտաջրերի ջրատար խողովակի մեջ: Ոտքի կամ թևքի պաշտպանիչները կարող են օգտագործվել այն իրավիճակներում, երբ թափոնների հետ աշխատողների ոտքերը կամ թևերը կարող են շփվել թափոնների պարկերի հետ: Շնչադիմակները օգտագործվում են, որպեսզի նվազեցվի շփումը միկրոօրգանիզմների, վնասակար փոշու կամ մոխիրների, թանձր ծխի, գոլորշիների և այլ վտանգավոր գազերի հետ: Սակայն, աշխատանքի պահանջով շնչադիմակներ կրող աշխատողները հատուկ ուսուցվում են և շնչադիմակի հետ կապված, կարիք ունեն հանդերձանքի փորձարկում՝ ճիշտ նստելու համար: Կան շատ տեսակի շնչադիմակներ, սկսած դեմքի պարզ դիմակներից վերջացրած օդազտիչ ռեսպիրատորներով և անկախ շնչառական սարքերով: Օգտագործվող հատուկ սարքի ընտրությունը կախված է աշխատանքի ժամանակ հավանական վտանգից: Եթե թափոնների վնասազերծման ժամանակ աղմուկների մակարդակը չափից շատ ուժեղ է, ապա աշխատողներին տրամադրվում է լսողական պաշտպանություն: Սաղավարտներ կարող են օգտագործել, եթե աշխատողները այնպիսի իրավիճակում են գտնվում, երբ նրանք կարող են խփվել ընկնող առարկաների կողմից:

10. <u>Կանխարգելիչ պատվաստում.</u>

Անհրաժեշտ է բժշկական թափոնների հետ գործ ունեցող աշխատողների համար կազմակերպել պատվաստումներ՝ վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ:

11. Խիստ կարևոր է անձնական հիգիենայի կանոնների պահպանումը, որի վրա հատուկ շեշտ է դրվում ուսուցման ժամանակ: Այս նպատակով, թափոնների հետ գործ ունեցող աշխատողների համար հարմար կերպով տեղակայվում կամ առանձնացվում են լվացման վայրեր՝ տաք ջրով և օճառով կամ օճառի փոխարինիչներով:

12. <u>Թափված թափոնների կառավորում.</u>

Կարևոր է, որպեսզի արյան, կենսաբանական հեղուկների, քիմիական նյութերի կամ այլ հավանական վտանգավոր նյութերի թափման կառավարման ժամանակ աշխատողներին տրվեն համապատասխան անձնական պաշտպանական հանդերձանք: Օրինակ՝ եթե կա որևէ ցայտման վտանգ, ապա կրվում են աչքի պաշտպանական սարքեր և դեմքի վահաններ: Անհրաժեշտ է օգտագործել ռեսպիրատորներ, եթե հավանական է վարակիչ աերոզոլների, թունավոր գոլորշիների կամ փոշու արտանետումների առաջացումը պատահարի ժամանակ: Վարակիչ թափոնների հետ կապված դժբախտ պատահարների ժամանակ, հատակը մաքրվում և ախտահանվում է, երբ աերոզոլները նստել են հատակին և թափոնների մեծ մասը հեռացվել է:

13. Կյանքին կամ առողջությանը սպառնացող լուրջ վնասվածքի կամ հիվանդության մասին պետք է անհապաղ հաղորդել թափոնների կառավարման պատասխանատու անձին կամ խորհրդի անդամին՝ արագ բժշկական օգնություն ցուցաբերելու համար: Դժբախտ դեպքերը ենթակա են ծառայողական քննության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Հաղորդման ենթակա են ստորև թվարկված պատահարները.

1) Սրածայրերի ծակումներ, օրինակ՝ ասեղների

2) Բժշկական թափոնների փոխադրող սայլի վնասում

3) Թափոնների չվերահսկվող դուրս թափվելը, որը պահանջում է առնվազն անմիջական թափված տարածության մաքրում:

15. <u>Մշակում և բժշկական վերահսկողություն.</u>

Վնասվածքի դեպքում ցուցաբերվում է առաջին բժշկական օգնություն, իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ, ինչպես նաև հետագայում կազմակերպվում է լրացուցիչ բժշկական օգնություն, այդ թվում շճաբանական վերլուծություններ և անհրաժեշտ կանխարգելիչ բուժում՝ կապված վնասվածքի բնույթից

**<u>Անկանխատեսելի դեպքեր</u>**

Անկանխատեսելի դեպքերի միջոցառումներ այն դեպքերի համար, երբ տեղի է ունենում բժշկական թափոնների արտահոսք, աշխատողը վնասվել է բժշկական թափոնների հետևանքով, կամ վնասազերծման համակարգը կանգնեցվել է վերանորոգման աշխատանքների համար:

- Արյան, կենսաբանական հեղուկների, քիմիական նյութերի կամ այլ հնարավոր վտանգավոր նյութերի դուրս թափվածը մաքրելիս պահանջվում է անձնական պաշտպանական հանդերձանքի կրում, ինչպես օրինակ՝ ձեռնոցների և գոգնոցների: Եթե որևէ ցայտումի վտանգ կա, ապա օգտագործվում է աչքի պաշպանող պարագաներ (ակնոցներ): Թունավոր գոլորշիների կամ փոշու հնարավոր առկայության դեպքում անհրաժեշտ է կրել ռեսպիրատորներ: Պինդ մնացորդները հավաքվում են համապատասխան

գործիքների օգտագործմամբ, օրինակ՝ բահեր: Թափված վարակիչ թափոնների առկայության դեպքում հատակը մաքրվում և ախտահանվում է՝ թափոններ հավաքելուց հետո:

- Թափոնների թափվածքը մաքրելու համար նախօրոք պատրաստվում են հատուկ հավաքածուներ, որոնք տեղադրվում են հեշտ մատչելի տեղում: Մաքրման տիպիկ հավաքածուն պարունակում է. միանվագ օգտագործման ձեռնոցներ, դեմքի դիմակ/անվտանգության ակնոցներ, բահ, փոքր շերեփ, մաքրող լաթեր, ներծծող բարձիկներ կամ ներծծող փոշիներ (օրինակ՝ թեփ, վերմիկուլիտ, այլ քիմիական ադսորբցիոն նյութեր՝ թափված արյան և կենսաբանական հեղուկների հավաքման համար), թղթե սրբիչներ, քլորակրի ախտահանող լուծույթ, ախտահանիչ լաթեր, լրացուցիչ կարմիր պարկեր, առաջին օգնության հավաքածուներ և կենսաբանական վտանգի պիտակներ: Հավաքածուն պարունակում է նաև ռեսպիրատորներ՝ հատկապես լաբորատորիաներում: Աշխատողները ուսուցանվում են ռեսպիրատորների ընտրության և ճիշտ գործածության բնագավառում:

## 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 5.1 Դիտարկվող տարածշրջանի ֆիզիկա-աշխարհագրական դիրքը

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարզատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին գյուղերին:

Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ Երևանից 17 կմ դեպի հարավ:

### 5.2 Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները

Ուսումնասիրվող համայնքը գտնվում է հանրապետության սեյսմաակտիվ գոտիներից մեկում, Արարատայան դաշտավայրի կենտրոնական մասում:

Ժամանակակից Արարատի գոգավորության կառուցվածքը սկսվել է ձևավորվել վերին էոցեն-օլիգոցենի ժամանակահատվածում և մինչև հիմա ենթարկվում է ճկման: Դրա մասին է վկայում դեպրեսիայի կենտրոնական մասի նեոգենի հասակի գոյացությունների հզորության մեծացումը: Մասնավորապես լճային նստվածքների հզորությունը այստեղ կազմում է 400մ: Լճային նստվածքները ներկայացված են կոպճա-կավավազա-ավազա-ավազակավային գոյացումներով, ծածկված լճային կավերով, որտեղ հանդիպում են ոսպնյակաձև հրաբխային գոյացումներ:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևույթային համատարած լվացումով մակերևույթային տեղումներով:

Ուսումնասիրված տարածքում տեխնածին երևույթները բացակայում են:

*Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները*

Մասիս քաղաքի տարածքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ ռելիեֆային բնույթ:

Ուսումնասիրված տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական մեկ էլեմենտ՝

Ալյուվիալ պրոլյուվիալ ակումուլյատիվ հարթավայր, մակերևույթի թեքությունը չի գերազանցում 10%:

***Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները***

Լիթոլոգիական տեսակետից Մասիս քաղաքի տարածքում առանձնացրել են հետևյալ երկրաբանական շերտախմբերը՝

1. Ժամանակից ալյուվիալ-պրոլյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:
2. Վերին չորրորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Մեծաբեկորային գրունտներով, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

***Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները***

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ, քանի որ ստորգետնյա ջրերը, տեղադրված են մակերեսից 5մ-10 մ մակարդակի վրա: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտերում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայուցամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլյացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

***Տարածքի լիթոլոգիական պայմանները***

Լիթոլոգիական տեսակետից առանձնացվում են՝

**Շերտ թիվ 1** Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև 35% քարակտորների պարունակությամբ, փոշենման ավազի ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային, տարածքում կավավազները ներկայացված են նաև գերնստող տարատեսակով: Հզորությունը տատանվում է 2.3 – 5.4 մետր:

***Շերտ թիվ 2*** Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Հզորությունը տատանվում է 2.0 – 4.5 մետր:

***Շերտ թիվ 3*** Խճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Հզորությունը տատանվում է 3.5 – 6.0 մետր:

**Շերտ թիվ 4** Մեծաբեկորային գրունտ, խիճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10%  կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

Հզորությունը տատանվում է 2.8 – 5.3 մետր:

*Չորրորդական ալյուվիալ պրոլյուվիալ առաջացումներ*

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ուսումնասիրման համար օգտագործվել են տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների հետևյալ տարատեսակները.

Կավային գրունտներ (Շերտեր թթ. 1)

Բեկորային գրունտներ (Շերտեր թ. 2, 3, 4)

Ստորև աղյուսակում բերված են գրունտների միջինացված ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

| Ֆիզիկա մեխանիկական ցուցանիշներ | Չափման միավոր | Գրունտներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | շերտ 1 | շերտ 2 | շերտ 3 | շերտ 4 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Ծավալային կշիռ | կգ/մ$^3$ | 1700 | 1750 | 1850 | 1700 |
| Տեսակարար շաղկապվածություն | ՄՊա | - | 0.005 | - | - |
| Ներքին շփման անկյուն | աստիճան | 29 | 22 | 34 | 20 |
| Դեֆորմացիայի մոդուլ | ՄՊա | 20 | 15 | 25 | 15 |
| Պայմանական հաշվարկային ճնշում | ՄՊա | 0.25 | 0.15 | 0.30 | 0.20 |

Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է երկու ինժեներաերկրաբանական շրջան՝ բարենպաստ և անբարենպաստ:

ՀՀՇՆ II-6.02-2006 ՙՍեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր՚ նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

### *I-3.2.1.4.* Լանդշաֆտների դասակարգումը և գնահատականը

*Լանդշաֆտի նկարագիրը*

Ուսումնասիրող տարածքի լանդշաֆտը Արարատյան հարթավայրի կիսաանապատային լանդշաֆտային գոտին է՝ անապատների և մշակովի հողի տեղամասերով, որոնք ձևավորվել են մարդու հազարամյա ագրոմշակութային գործունեության արդյունքում: Այստեղ ոռոգման խիտ ցանցի անցկացման շնորհիվ հողա-բուսական ծածկույթը փոփոխված է այնպես, որ զգալի տարածություններում անհետացել են այդ գոտիներին բնորոշ գորշահողերը և բուսական բնական համակեցությունները: Մարդու կողմից ստեղծվել է կուլտուրական լանդշաֆտ՝ չոր մերձարևադարձային պտղաբուծության, այգեգործության և բանջարանոցային տարածությունների գերակշռությամբ: Անապատային և կիսաանապատային լանդշաֆտի բնական տեղամասեր մնացել են միայն անջրդի տարածություններում, ցանքատարածությունների դաշտամիջյան ճանապարհների եզրերին, կամ ոռոգման կանալների շուրջ չմշակվող տարածքներում, արոտավայրերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում և ջրաճահճային էկոհամակարգերում:

Արարատյան հարթավայրի հյուսիսային մասը, որն ընդգրկում է Քասախ, Հրազդան և Վեդի գետերի ավազանները, հանդիսանում է Հայաստանի հիմնական գյուղատնտեսական շրջանը, սակայն հողերի աղակալման և ճահճացման պահճառով հարթավայրի ավելի քան քառորդ մասը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում: Ընդ որում, այդպիսի տարածքների ընդարձակմանը նպաստում են նաև ոչ նորմավորված ոռոգումը, դրենաժային համակարգի անբավարար վիճակը և ջրալույծ աղեր պարունակող ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացումը:

Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի պատճառ է հանդիսացել խոնավ ցածրավայրային աղուտային մարգագետինների առկայությաունը: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այպես կոչված՝ չալաների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ: Հարավ արևելյան նախալեռնային ցածր լեռնային նստվածքային ջրամերժ ապարներ ունեցող տարածքներում, շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատա-կիսաանապատային լանդշաֆտների որոշակի տիպեր՝ Բեդլենդներ, որոնք զերծ են բուսական ծածկույթից: Կիսաանապատային լանդշաֆտների առանձնակի հատկություններից մեկն էլ զիպսի կուտակումն է:

## 5.3 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր

մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս:

Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնումոռոգվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման: Առավել ցածրադիր տեղերում, Արաքսի և նրավտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղազրկման և կուլտուրականացման աշխատանքներ:

Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը:

Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- ժամանակակից գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը, անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ, վանադիում և այլն) և ցիանական միացություններով:

Հողի աղտոտման աղբյուրներից մեկը մթնոլորտն է: Մթնոլորտի վնասակար նյութերը նստում են հողի մակերեսին, թափանցում են գրունտային ջրերի մեջ, իսկ դրանց մի մասն էլ փոշու ձևով վերադառնում է մթնոլորտ:

Մարդու և կենդանիների առողջության վրա բացասաբար են ազդում պարարտանյութերի բոլոր խմբերը, մասնավորապես քլոր պարունակող և ֆոսֆորական պարարտանյութերը:

Ծանր մետաղների կուտակումը հողում կատարվում է ավելի արագ տեմպերով, քան հեռացումն ու չեզոքացումը, որը տևում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ:

Գյուղատնտեսական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ հանքային պարար-տանյութերը, թունաքիմիկատները, անասնապահական համալիրները: Հանքային պարարտանյութերի կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օգտագործման օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայքայվում է հողի կառուցվածքը:

## 5.4 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տեղանքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Արտաշատ օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալները: Օգտագործելով կլիմայական հաշվարկային մեթոդները, հաշվարկվել են տեղանքի կլիմայական բնութագրերը:

Շրջանի կլիման չափավոր տաք է: Ձմեռը տևական և համամատաբար տաք է, թույլ քամիներով, բավական կայուն ու հաստ ձնածածկ շերտի գոյացումով: Ամառը շոգ է, չոր:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.7˚C, հունվարինը՝-4˚C, ապրիլինը՝ 12.8˚C, հուլիսինը՝21.6˚C, հոկտեմբերինը՝13˚C: Ջերմաստիճանի ամսական ամպլիտուդան 8.6˚Cէ: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝

-29˚C, դիտվել է հունվարին, բացարձակ առավելագույնը՝ +43˚C է՝ դիտվել է օգոստոսին:

Հողի մակերևույթի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 9˚C է: հունվարին՝-5˚C, իսկ հուլիսին՝23˚C: Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70 սմ:

Օդի միջին տարեկան ճնշումը 861.0 մբ է, բացարձակ խոնավությունը 8.2մբ է, իսկ հարաբերականը՝ 72%:

Տարեկան մթնոլորտային տեղումներիքանակը կազմում է 265մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է օգոստոսին՝ 72 մմ, իսկ նվազագույնը դեկտեմբերին՝ 20 մմ:

Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 10 սմ: Ձյան տեսքով տեղումների քանակությունը 124 մմ է: Նոյեմբերի 13-ից դիտվում է կայուն ձնածածկույթ, որը վերանում է ապրիլի 5-ին: Ձյան ծածկոցի առավելագույն շերտի բարձրությունը 10սմ է, միջինը՝10 սմ:

**Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը**

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից
- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա

ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 5.4-ում:

**Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները**

Աղյուսակ 5.4

| Կլիմայի գործոնները | Հարմարավետությունը | Անհարմարավետությունը | |
|---|---|---|---|
| | | գերտաքացում | սառեցում |
| Օդի ջերմաստիճանը, ˚C | 12-14 | 24-ից բարձր | -30-35, -1.5 մ/վրկ,<br>-25, 2.0 մ/վրկ,<br>-15, 3. մ/վրկ<br>Քամու դեպքում |
| Քամու արագությունը, մ/վրկ | 0.5-3.0 | փոքր 0.5<br>մեծ 3.0 | 5-ից մեծբացասական ջերմաստիճանի դեպքում |
| Հարաբերական խոնավությունը, % | 30-70<br>մայիս-օգոստոս | 30-իցփոքր<br>70- ից բարձր<br>Մնացած 9 ամիս | 80- ից բարձր<br>չկա |

Օդի միջին ամսական ջերմաաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին գերազանցում է 24 ˚C: Գերտաքանցման փաստը ինչպես համայնքներում նկատվում է տարվա ընթացքում 2 ամիս՝ 62 օր:

12-14˚C գերազանցման դեպքերը նկատվում են ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից մարտից մինչև հոկտեմբեր ամիսները դիտարկվում են ինչպես հարմարավետ, 80%-ից բարձր խոնավություն չի արձանագրվել:

70%-ից բարձր խոնավություն նկատվում է հունվար, փետրվար ամիսներին, և նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների ընթացքում: 3.0 մ/վրկ-ից մեծ քամու արագություն չի դիտարկվում:

Դեկտեմբերից–մարտ ժամանակահատվածում օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտարկվում է –15˚C-ից բարձր, սակայն նշված ամիսներին քամու արաությունը գտնվում է 1.4-2.8մ/վրկ-ի սահմաններում:

### Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը ($^{0}C$)

Աղյուսակ 1.2

| Դիտարկումներ | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտաշատ քաղաք, | -4 | -1.3 | 5.3 | 12.8 | 17.7 | 21.6 | 25.5 | 24.5 | 20.0 | 13.0 | 6.0 | -0.8 | 11.7 |

### Միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 1.3

| Դիտարկումներ | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտաշատ քաղաք | 78 | 73 | 64 | 57 | 59 | 54 | 51 | 51 | 57 | 66 | 75 | 79 | 64 |

## Քամու միջին ամսական և տարեկան արագությունը (մ/վրկ)

Աղյուսակ 1.4

| վայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա) | Ամիսներ | Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների / Միջին արագությունը, մ/վ | | | | | | | | Անհողմությունների կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը | Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հյուսիսային (Հս) | Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ) | Արևելյան (Արլ) | Հարավ-Արևելյան (ՀվԱրլ) | Հարավ (Հվ) | Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ) | | | | | 20 | 50 | 100 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| Արտաշատ | 920,2 | հունվար | 7 | 8 | 10 | 20 | 12 | 10 | 15 | 18 | 88 | 0,3 | 0,4 | 7 | 21 | 24 | 26 |
| | | | 1,7 | 1,7 | 2,7 | 3,1 | 2,4 | 2,0 | 2,2 | 1,7 | | | | | | | |
| | | ապրիլ | 4 | 9 | 12 | 27 | 13 | 8 | 13 | 14 | 74 | 0,6 | | | | | |
| | | | 1,7 | 1,8 | 2,1 | 2,8 | 2,5 | 2,8 | 2,8 | 2,6 | | | | | | | |
| | | հուլիս | 8 | 7 | 9 | 16 | 9 | 9 | 18 | 24 | 80 | 0,4 | | | | | |
| | | | 1,7 | 1,9 | 1,7 | 2,0 | 2,0 | 2,0 | 2,7 | 2,3 | | | | | | | |
| | | հոկտեմբեր | 7 | 12 | 12 | 19 | 8 | 10 | 16 | 16 | 85 | 0,3 | | | | | |
| | | | 1,6 | 1,5 | 2,1 | 2,0 | 1,5 | 2,1 | 2,4 | 2,0 | | | | | | | |

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անալիզը ցույց է տալիս, որ նշված համայնքներում 1T, 2T և 3T դասերի «շոգ եղանակները դիտարկվում են հուլիս, օգոստոսամիսներին,որիընթացքումառաջանումէջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա: Հարմարավետության ժամանակահատվածը ժամը 13-ից մինչև ժամը 21-ը նշված համայնքների համար կազմում է 83%, անհարմարավետության ժամանակահատվածը 17%:

Անհարմարավետության պայմանների հաշվառման չափանիշը հանդիսանում է անհարմարավետության ժամանակահատվածի տևողությունը:

Տարվա կտրվածքով անհարմարավետության ժամանակահատվածը մեծ է 8% (17%) տարեկան ժամանակահատվածից, որը հանգեցնում է նրան, որ նախագծման ժամանականհրաժեշտէնախատեսելմիշարքհատուկ միջոցառումներ:

## 5.5 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Մասիս համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հաշվետվությունում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Մասիսի համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 20 500 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), Մասիս համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշումասնիկներ՝ 0,3մգ/մ3, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ3, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ3 և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ3:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն ($ՍԹԿ_{փոշի}$ = 0,15 մգ/մ3):

Աղ. 3 *Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար)*:

| Բնակչության քանակը (հազ.) | Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ³) | | | |
|---|---|---|---|---|
| | **Ընդհանուր փոշի** | Ծծմբի երկօքսիդ | Ազոտի երկօքսիդ | Ածխածնի օքսիդ |
| 50 -125 | 0,4 | 0,05 | 0,03 | 1,5 |
| *10 - 50* | **0,3** | **0,05** | **0,015** | **0,8** |
| < 10 | 0,2 | 0,02 | 0,008 | 0,4 |

## 5.6 Բուսական և կենդանական աշխարհը

ՀՀ Արարատի մարզի տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

**Կենսաբանական ռեսուրսներ**: Կիսաանապատուային գոտու կենսառեսուրսները աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն կերհանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանայինբուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշը, շուշանը, դանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային գազերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողթռչուններ /սնփարփար, մեծսուզակ, փոքրսուզակ, կռնչանբադ, մոխրագույն բադ և այլն:

Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը:

Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

### 5.6.1 Բուսական աշխարհը

Անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակներից են շորան, բալախը, սարսազան որոնք դիմանում են աղակալմանը: Քաղաքի հարավային մասում գերակշռում է հալոֆիտային, հալոքսեռոֆիտանապատային բուսականությունը - Salsola eticoides, S. dendroides, S.nitraria, Haiocnemumstrobilaceum: Արևելքում օշինդրա-էֆեմերային կիսաանապատային բուսականության գերակշռությամբ - Artemisia fragrans, Kochiaprostrata, Capparis herbacea, Ceratoides papposa, Atraphaxi sspinosa, Rhamnus paiiasii, Tanacetum argyrophyllum, Poa bulbosa, տեսակներ - Bromus, Aegilops, Eremopyrum, Alyssum: Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են օշինդր

բուրավետը, Օշան գորշ, Օշան հավամրգանման, գեղածնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույսգետնատարած: Հազվագյուտ և անհետացող զիպսոֆիտ անապատային բուսական ֆորմացիաներ Cephalorrhynchustakhtadzhianii, Zygophyllumatriplicoides:

Մարզի էնդեմիկ տեսակներն են կտավատազգիներ (Linaceae), մեխակազգիներ (Caryophyllaceae):

Մարզի տարածքում հանդիպող և անհետացող բուսական տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 72-Ն որոշումից:

### 5.6.2 Կենդանական աշխարհ

Տարածքը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /Testudograeca/, բարեկազմ օձ ազլուխ մողեսը /Ophisopselegans/, Շտրաուխի /Eremiasstrauchi/ և Անդրկովկասյան /E. pleskei/ մողեսիկները, Անդրկովկասիան թաքիրային կլորագլուխը /Phrynocephalushelioscopuspersicus/, մողեսաօձը /Malpolonmonspessulannus/, վզնոցավոր /Eireniscollaris / և Հայկական /E. punctatolineatus / էյրենիսները, կարմրափոր սահնօձը կամշահմարը / Coluberschmidti/ և կապարագույն սահնօձը /C. nummifer/, Անդրկովկասյան գյուրզան /Viperalebetina/: Կրծողներից – սովորական /Microtusarvalis/ և հասարակական /M. socialis/ դաշտամկները, հարավային /Merionesmeridianus/, փոքրասիական /M. blackleri/ և Վինոգրադովի / M. vinogradovi / ավազամկները: Կատվազգիներից - եղեգնակատուն /Felischaus/: Ջրաճահճային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան/Mauremiscaspica/ և լճագորտը/Ranaridibunda/:

Նշված համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից՝լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշավորներից՝անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ Կովկասյան փառավոն (Pharaonus caucasicu):

## 5.7 Պատմամշակույթային հուշարձաններ

Արարատի մարզի Մասիս գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 5 հուշարձան (4 միավոր):

| հուշարձան | կառուցված | Վայր, հասցե | կոորդ | համար անիշ | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | 19-20 դդ. | հվ եզրին | — | 3.57/1 | Սբ. Աստվածածին եկեղեցուց 200 մ |

| հուշարձան | կառուցված | Վայր, հասցե | կոորդ | համար անիշ | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հս-աե |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 19 դ. | հվ եզրին | — | 3.57/2 | կիսավեր |
| Խաչքար | 1542 թ. | | — | 3.57/4.1 | մատուռի ներսում |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամար տում զոհվածներին | 1983 թ. | գ. մ. | — | 3.57/3 | քանդ.՝ Գ. Եփրեմյան |
| Մատուռ Սբ. Թադևոս Առաքյալ | 16 դ. | հվ եզրին | — | 3.57/4 | վրկռ.՝ 20 դ., Սբ. Աստվածածին եկեղեցուց հս-ամ |

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Մասիս քաղաքում բնության հուշարձանները ևս բացակայում են:

## 5.8 Ջրային ռեսուրսներ

Արարատյան ՋԿՏ-ը ներառում է Ազատի, Արփայի և Վեդիի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը: 2022 թվականին Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում, որոնցից 8%- ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 62%- ում՝ 3-րդ դաս, 15-ական %-ում՝ 4-րդ և 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Արփա գետի՝ Եղեգնաձորից վերև և Արենիից ներքև դիտակետերի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս և Դարբ գետի՝ գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 5-րդ դաս: Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որից 10- ում՝ նաև որակի մոնիթորինգ: 2021 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 214.3 մլն մ3, որից 64%-ը բաժին է ընկնում մակերևութային ջրերին, 36%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (75%), ձկնաբուծության (12%), խմելու (8%) և արտադրական (5%) նպատակներով:

## Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Չորս հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 25. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը

| Գետ | Դիտակետ | Միջին տարեկան ելքեր, մ³/վ | | |
|---|---|---|---|---|
| | | փաստացի | նորմա | % |
| Ազատ | Գառնի | 3.04 | 4.72 | 64.4 |
| Վեդի | Ուրցաձոր | 1.03 | 1.64 | 62.8 |
| Արփա | Ջերմուկ | 2.99 | 5.21 | 57.4 |
| Արփա | Արենի | 9.68 | 14.4 | 67.2 |

Մակերևույթային ջրերի որակ

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արարատ քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով, մանգանով և ալյումինով: Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Ջերմուկ քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, երկաթով, կախության չոր նյութերով, Վայք քաղաքից վերև՝ երկաթով և ալյումինով, Վայք քաղաքից ներքև՝ երկաթով, Եղեգնաձոր քաղաքից վերև՝ մոլիբդենով և երկաթով, Արենի գյուղից ներքև՝ պայմանավորված մոլիբդենով, երկաթով և բարիումով:

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝պայմանավորված մոլիբդենով:

Դարբ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, բարիումով, ալյումինով և ծարիրով, գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝պայմանավորված մանգանով:

Հերհեր գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով:

# 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## *6.1 Օդային ավազան*

Այրման վառարանի շահագործման ընթացքում վնասակար նյութերի արտանետումները առաջանում են գազի և թափոնների այրման արդյունքում:

Թափոնների այրման արդյունքում առաջացող արտանետումներ՝

- Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշվարկով/ NOx
- Ածխածնի օքսիդ CO
- Սահմանային ածխաջրածիններ
- Ծծմբային անհիդրիդ $SO_2$
- Կախված մասնիկներ

Վառելիքի այրման արտանետումները՝

- Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշվարկով/ NOx
- Ածխածնի օքսիդ CO

Արտանետումների քանակական հաշվարկները կներկայացվեն հիմնական հաշվետվությունում:

## *6.2 Սանիտարապաշտպանիչ գոտի*

Սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը սահմանվում են СН 245 – 71 ստանդարտով, սակայն նման կարգի կայանքների (ինսիներատոր) համար դասակարգում այդ ստանդարտում չկա:

Ռուսաստանի Դաշնության պետսանէպիդհսկողության Դաշնային կենտրոնը սահմանել է սանիտարապաշտպանիչ գոտի ИН-50-ОВЕН շարքի կայանքների համար (№ 77.ФЦ.29.945.П.000005.01.05) 10 – 100 մ:

## *6.3 Արտադրական թափոններ*

Կենսաօրգանական թափոնների ջերմային վնասազերծման ընթացքում առաջանում են այրման մնացորդներ (մոխիր): Ըստ արտադրող կազմակերպության տվյալների այրման մնացորդների քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 2 - 5 տոկոսը: Հաշվի առնելով հաշվարկային առավելագույն արտադրողականության ցուցանիշը՝ 500 տ/տարի, մնացորդների (թափոնի) առավելագույն քանակը կկազմի 25 տ/տարի: Այս թափոնը ՀՀ բնապահպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածում ներկայացված է 3130180001013 ծածկագրի տակ՝ "թափոնների այրման մոխիր (այրման վառարաններ)" տողում:

Թափոնների բարձր ջերմաստիճանային այրումից առաջացած մնացորդները սանիտարահիգիենիկ տեսակետից անվտանգ են:

Որսված պինդ մասնիկները պարկերով լցվում են մետաղական արկղերի մեջ ժամանակավոր պահեստավորման համար: Յուրաքանչյուր մետաղական ակրղի պարունակությունը կազմում է 200 կգ: Նախատեսվում է շաբաթական մեկ-երկու անգամ մետաղական արկղերի պարունակությունը սանիտարական ծառայության

մեքենաներով համապատասխան պայմանագրի հիման վրա, տեղափոխել աղբավայր: Տեղափոխումը կիրականացվի նույն արկղերով, որոնք դատարկ վիճակում կվերադարձվեն ընկերության պահեստ: Արկղերի ծառայման ժամկետը չի սահմանափակվում:

Նախատեսվում է մինչև նոր կայանքի գործարկումը սահմանված կարգով մշակել թափոնի անձնագիր, ներկայացնել այն հաստատման ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն և պայմանագրային հիմունքներով տեղափոխել այն համապատասխան աղբավայր:

### *6.4 Սոցիալական ազդեցությունը*

Յուրաքանչյուր գործունեության սոցիալական ազդեցության հիմնական ուղղություններն են՝

- Բնակչության և աշխատակիցների առողջությունը
- Աշխատատեղերի ավելացումը
- Բնառեսուրսների վերաբաշխումը
- Աշխատանքային հարաբերություններ

Թվարկվածներից առկա է միայն առաջին կետը, պայմանավորված բժշկական թափոնների հետ սպասարկող անձնակազմի շփմամբ:

### *6.5 Հնարավոր հոտի ազդեցությունը*

Վնասազերծման գործընթացը տեղի է ունենում բարձր ջերմաստիճանային ռեժիմում, ինչի արդյունքում լրացուցիչ հոտառաջացում չի նախատեսվում, ինչը նաև հիմնավորվել է նմանատիպ սարքավորումների շահագործման գործընթացով:

### *6.6 Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն*

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնածին ազդեցության տեսակետից արտադրական տարածքի շրջանում հիմնական աղտոտման աղբյուր են հանդիսանում ավտոճանապարհով անցնող եզակի ավտոտրանսպորտային միջոցները:

Այլ նմանատիպ գործունեությունը մոտակայքում չկա:

Հաշվի առնելով ազդեցության մակարդակի ոչ էական տարբերությունը, զգալի հավաքական ազդեցություն չի սպասվում:

## 7. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

### 7.1 Մթնոլորտային օդ

Ազդեցությունները նվազեցնելու համար կարևոր են հետևյալ միջոցառումների կատարումը.

- թափոնների վնասազերծման համար նախատեսված է տեղադրել երկաստիճան ջերմային վնասազերծման կայանք,

- ապահովել այրման ռեժիմը և անհրաժեշտ ջերմաստիճանը ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդային խցում,

- պարբերաբար իրականացնել սարքի պրոֆիլակտիկ ստուգում և տեստավորում

- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից,

- իրականացնել օդային ավազանի մոնիթորինգ՝ ածխածնի օքսիդի, ազոտի և ծծմբի օքսիդների գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով արտանետումների նկատմամբ:

### 7.2 Ջրային ռեսուրսներ

Թափոնների ընդունման, վնասազերծման ընթացքում ջրային ռեսուրսների աղտոտումը բացառելու համար նախատեսված է.

- թափոնների պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,

- վնասազերծման սարքի մաքրումն իրականացնել չոր եղանակով (մեխանիկական մաքրում, խոզանակի միջոցով), առանց ջրի օգտագործման:

### 7.3 Հողային ռեսուրսներ

- Բեռնարկղերի մեջ տեղադրված թափոնների ժամանակավոր պահման համար արտադրական տարածքում առանձնացնել հատուկ տարածք, որն ունենա բետոնապատ հատակ,

-Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է՝ պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն.

- պարբերաբար իրականացնել մերձակա տարածքների ստուգում:

- Արտադրական կեղտաջրերի առաջացումը կանխելու համար կայանքի մաքրումը իրականացվելու է չոր եղանակով, առանց ջրի կամ լուծույթների օգտագործման:

- Կայանքը սպասարկող բանվորը, ինչպես նաև թափոնների հետ առնչվող անձնակազմը անցնում է համապատասխան դասընթաց և պարբերաբար հրահանգավորվում է:

### 7.4 Կենսաբազմազանություն

**Բուսական աշխարհ.** Այրման հանգույցի շահագործման ընթացքում բուսատեսակների վրա ազդեցություն չի նախատեսվում:

**Կենդանական աշխարհ.** գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Մասիս քաղաքի արդեն իսկ կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

### 7.5 Աշխատանքի անվտանգություն

- Աշխատողների վերապատրաստում բարձր ջերմաստիճանային պայմաններում աշխատելու, էլեկտրական եւ փոխադրական միջոցների անվտանգության, վտանգավոր նյութերի հետ աշխատելու, վտանգավոր նյութերի հատկությունների, ինչպես նաև առաջին օգնություն ցուցաբերելու և փրկարարական տեխնիկայից օգտվելու և վթարային հակազդման վերաբերյալ և այլն,
- Աշխատողներին տրամադրել անձնական պաշտպանական միջոցներ
- Աշտարակների, ենթակայանների վրա տեղադրել նախազգուշական նշաններ «Վտանգ հոսանքահարումից»
- Ապահովել սանիտարական պայմաններ՝ համապատասխան քանակության սանիտարական հարմարություններ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին
- Ապահովել անհրաժեշտ կենցաղային հարմարություններ:

Սարքի յուրաքանչյուր օգտագործման համար պետք է վարվի դրա աշխատանքի գրանցման մատյան, որում պետք է գրանցվի հետևյալը.

- 1) ամսաթիվը և աշխատողի անունը.
- 2) վարակազերծված թափոնի տեսակը և քանակը.
- 3)ոչնչացումը հաստատող արդյունքները՝ գրանցելով թափոնի մշակման ջերմաստիճանը, ժամանակի տևողությունը:

### 7.6 Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծախսերը ըստ նախնական գնահատման կկազմեն՝ 280.0 հազար դրամ:

### 7.7 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիրը արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում:

Վտանգավոր թափոնների ոչնչացման համալիրի շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- Բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) թափոնների ոչնչացումը դադարեցվում է և անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
- Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է համալիրի արտադրական գործընթացների հսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է ջերմային վնասազերծման արտադրողականությունը,
- III կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է ջերմային վնասազերծման գործընթացը:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես ընկերության անվտանգության պատասխանատուի կամ նրան

փոխարինող անձի կողմից:

## 8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական ազդեցությունը պայմանավորված է թափոնների վնասակար հատկություններով, ինչպես նաև այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի ազդեցությամբ:

Հիմնական նյութերն են ազոտի և ծծմբի երկօքսիդները, ածխածնի մոնօքսիդը, ածխաջրածինները և պինդ մասնիկները:

Օդում ածխածնի մոնօքսիդի, ազոտի և ծծմբի երկօքսիդի պարունակությունը վերահսկելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ):

Այդ նպատակով նախատեսվում է պայմանագիր կնքել մասնագիտացված բնապահպանական կազմակերպության հետ, որը համալիրի շահագործման ընթացքում կիրակացնի չափումներ՝ ածխածնի մոնօքսիդի, ազոտի ու ծծմբի երկօքսիդների պարունակությունները որոշելու համար:

Յուրաքանչյուր չափում պետք է իրականացվի բոլոր նշված միացությունների երկուական նմուշառումների միջոցով: Նմուշառման կետերը պետք է լինեն համալիրի ծխատար խողովակի մերձակայքում՝ 2 – 5 մ շառավղով և ամենա մոտ զգայուն կլանիչի մոտ: Մոնիթորինգի արդյունքները ճշգրիտ լինելու նպատակով, նմուշառման կետերի հեռավորրությունը ընտրվում է հնարավորինս մոտ արտանետման աղբյուրին և մոտակա զգայուն կլանիչին:

Մոնիթորինգի միջոցառումների պարբերականությունը կլինի եռամսյակային, չափումների արդյունքները կգրանցվեն մոնիթորինգի մատյաններում և կտրամադրվեն վերահսկող մարմիններին:

Աղյուսակ 9.1. Բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլան

| *№* | *Արտադրական գործընթաց* | *Մեղմող միջոցառում* | *Մոնիթորինգի միջոցառում* | *Մոնիթորինգի հաճախակա-նություն* | *Նախատեսվող ծախսեր, հազ.դրամ* |
|---|---|---|---|---|---|
| 1 | Թափոնների տեղափոխում | Բժշկակա թափոնները տեղափոխել փակ մեքենաներով, համապատասխան տարաների մեջ | Մեքենաների, տարաների և մերձակա ճանապարհների ստուգումներ | Օրական | Շահագործման ծախսեր |
| 2 | Թափոնների պահեստավորրում | Բժշկական թափոնները պահել առանձնացված սենյակում որը կունենա բետոնապատ հատակ և ապահովված կլինի կենցաղային հարմարանքներով | Պահեստների և շրջակա տարածքների ստուգումներ | Օրական | Շահագործման ծախսեր |
| 3 | Բժշկական | - Այրման ռեժիմի | Կայանքի տեխնոլոգիական | Օրական | Շահագործման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | թափոնների այրում | հսկողություն<br>- Լրաայրման խցի տեխնոլոգիական ցուցանիշների հսկողություն<br>- օդամղիչի աշխա-տանքի հսկողություն | հսկման և ավտոմատ կառավարման վահանակի, չափիչ սարքերի և գրանցամատյանների ստուգումներ | | ծախսեր |
| | Այրման հանգույցում արվող թափոնների տեսակների շարժի հետևում | Բացառել վտանգավոր քիմիական բժշկական թափոնների ընդունումը այրման խուց | Մինչև թափոնների բեռնումը այրման խուց իրականացնել ստուգում և գրանցում գրանցամատյանում | Օրական | |
| 4 | Թափոնների այրման գործընթացի հետևում ր կարգավորում | Տեխնոլոգիական ռեգլամենտի պահանջների խստագույն պահպանում | Նմուշառում և գործիքային չափումներ.<br>- ազոտի երկօքսիդ<br>- ածխածնի մոնօքսիդ<br>- ածխաջրածիններ<br>- պինդ մասնիկներ<br>- ծծմբի երկօքսիդ | եռամսյակ | 280.0 դրամ |
| 6 | Աշխատանքների կազմակերպում | Սպասարկող անձնակազմը պետք է ապահովված լինի արտահագուստով և անհատական պաշտպանության միջոցներով, նախազգուշական նշաններ | Ստուգումներ | Օրական | Շահագործման ծախսեր |
| | Արտադրական տարածքի և վառարանի մաքրում | Արտադրական կեղտաջրերի առաջացումը կանխելու համար համալիրի մաքրում չոր եղանակով, առանց ջրի կամ լուծույթների օգտագործման | Արտադրական տարածքի ստուգումներ<br>և վառարանի ստուգում աշխատանքը դադարեցնելուց հետո | Ամենօրյա<br>Շաբաթը մեկ | Շահագործման ծախսեր |
| | Հնարավոր վթարային իրավիճակներ, անբարենպաստ օդերևութային պայմաններ | Հրդեհի ժամանակ հոսանքազրկել բոլոր էլեկտրական սարքերը, միացնել է հակահրդեհային ջրի համակարգը, արտադրական գործընթացների հսկողության ուժեղացում, ընդհուպ մինչև դադարեցում | Մշակել գործողությունների ծրագիր, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր, պակասացնել վառարանի այրման արտադրողականությունը | Անհրաժեշտության դեպքում | |

Ընկերության կողմից նախատեսվող ռուսական արտադրության ECO-4000 մակնիշի այրման հանգույցում բացառվելու է առողջապահական կազմակերպություններից սնդիկ պարունակող սարքավորումների, ֆորմալդեհիդի և նյութերի ընդունումը, քանի որ դրանք հանդիսանում են վտանգավոր բժշկական թափոններ:

ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելվածների պահանջներով առողջապահական կազմակերպություններից վտանգավոր քիմիական թափոնների և նյութերի հեռացումը յուրաքանչյուր առողջապահական կազմակերպության կողմից իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելվածների համաձայն: Կազմակերպությունը հետևում է վտանգավոր բժշկական թափոնների շարժին՝ կազմակերպության ներսում դրա գոյացման վայրից մինչև կազմակերպության ներսում կամ դրսում դրա վերջնական հեռացումը: Սա կատարվում է կազմակերպության յուրաքանչյուր բաժանմունքում՝ այս գործողությունը կատարելու համար նշանակված մի աշխատողի կողմից կամ մի քանի աշխատողների միացյալ ջանքերով: Մեկ լրիվ աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ աշխատողը զննում է, թե որտեղ են առաջանում թափոնները, կազմակերպության ներսում որտեղ են փոխադրվում մինչև դրանց վերջնական հեռացումը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
2. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
3. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: EMEP/EEA
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности. Стройиздат. Москва. 1982г.
6. "Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ" հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
7. Ñòðîèòåëüíàÿ êëèìàòîëîãèÿ ÑÍÐÀ II -7.01-96
8. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы, Обнинск 1984г.
9. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
10. Пособие по составлению раздела проекта "Охрана окружающей природной среды " к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
11. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
12. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է սեփականության ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

սեփականության (օգտագործման)

«[illegible]» բաց

(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը)

բաժնետիրական ընկերությանը

[illegible]

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

[illegible] ՆԿԱՏՄԱՄԲ

Պետական գույքի մասնավորեցման 30.08.2002թ

(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ս/ն 2-1086 պայմանագրի ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ 03-083-3-1 ՄԱՏՅԱՆԻ 000024 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՈՐԻՑ ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍ ՕՐԻՆԱԿԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ:

1. [illegible]
2. 03-083-3-2
3. 000023
[illegible]
24.09.05թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԵՏԻ ՊԵՏ

ՂԵԿԱՎԱՐ Ա. [illegible]

(ստորագրություն)

Կ.Տ.

« 12 » 09 2002թ 199 թ.

0210556

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Մ 1:2000

(մասշտաբ)




| ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ | ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| 1 | ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔ |
| 2 | ԱՆԱՍՆԱՇԵՆՔ |
| 3 | ՋԵՐՄՈՑ |
| 4 | ՄԻՋԱՆՑՔ |
| 5 | ՋԵՐՄՈՑ |
| 6 | ՋԵՐՄՈՑ |
| 7 | ՋԵՐՄՈՑ |
| 8 | ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ |
| 9 | ԾԱԾԿ |
| 10 | ՊԱՐԻՍՊ |

| ՀԱՏՎԱԾԸ | ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ /Մ/ | ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԱՆՈՒՆ - ԱԶԳԱՆՈՒՆԸ |
|---|---|---|
| 1 - 2 | 68,0 | Պ.Հ. |
| 2 - 3 | 96,7 | Պ.Հ. |
| 3 - 4 | 170,4 | «ՄԱՍՇԻՆԱՊԱՍ» ԲԲԸ |
| 4 - 5 | 300,4 | «ԷԼԵԿՏՐԱՄԵՔԱՌ» ԲԲԸ |
| 5 - 6 | 279,4 | Պ.Հ. |
| 6 - 7 | 171,9 | Պ.Հ. |
| 7 - 8 | 20,0 | Պ.Հ. |

Կատարող ________ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

(ստորագրություն)

ԲԱԺՆԻ ՊԵՏ ________ Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

# ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Մ 1:200
(մասշտաբ)




1. ՀԱՐԹԱԿԱՆ ՇԵՆՔ

H=3,0
h=2,8
d=0,4÷0,1

ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)

ՆԵՐԴԻՐ 1

# ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

(մասշտաբը)




Ստորաբաժանման ղեկավար ______ Ս. Հարությունյան
(ստորագրություն)

Կատարող ______ Ա. Մանուկյան
(ստորագրություն)

Բաժնի պետ ______ Ա. Ծաղարյան

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 03-082-201-010

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ արդյունաբերության

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ [illegible]. արտադրական օբյեկտներ

ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 7.81

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ [illegible] սեփականություն

## ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 201-010-001, 201-010-002, 201-010-004, 201-010-008

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ արտադրական

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ վարչ. շենք, [illegible], [illegible], կաթսայատուն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ(ՔՄ) 507.4

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ սեփականություն

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՄԱԿԵ-ՐԵՍԸ (քմ) | ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ |
|---|---|---|---|---|
| | | | 1061.3 | սեփականութ. |
| 3 | 201-010-003 | [illegible] | 1055.5 | սեփականութ. |
| 5 | 201-010-005 | [illegible] | 1055.5 | սեփականութ. |
| 6 | 201-010-006 | [illegible] | 1061.3 | սեփականութ. |
| 7 | 201-010-007 | [illegible] | 62.0 | սեփականութ. |
| 9 | 201-010-009 | [illegible] | 739.0 ք.5 | սեփականութ. |
| 10 | 201-010-010 | [illegible] | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ; փոփոխություններ [illegible] [illegible] 07.10.05թ [illegible] №199-Ն ՀՀ օրենքի 23 հոդ. [illegible]

07.12.05թ [illegible]

Կատարողներ՝ [signature]
(ստորագրություններ)
[signature]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «18» Հոկտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս ք. Երկաթուղայինների փողոց 4

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր 09/10/2018թ ս/մ 5665

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը`

Մակերեսի չափը (հա)`

Նպատակային նշանակությունը`

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը`

Գրանցված իրավունքի տեսակը`



2578504

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | **03-003-0443-0008-001** | Տրանսպորտային բաժին | 432.66 ք.մ. | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հերմինե Գրիգորյան

զբաղեցրած պաշտոնը՝ Մարզերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

Արարատի մարզ
ք. Մասիս
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 03-003-0443-0008
Մասշտաբ 1: 5000




| | Կոորդինատներ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | X | Y | | | | | X | Y |
| 1 | 8449635.0205 | 4437823.9662 | 14 | 8449887.3024 | 4438136.9826 | 27 | 8450186.6354 | 4437635.7063 |
| 2 | 8449658.2561 | 4437867.2865 | 15 | 8449898.2730 | 4438132.1196 | 28 | 8450180.3147 | 4437625.2073 |
| 3 | 8449667.9068 | 4437884.3483 | 16 | 8450231.8331 | 4437930.3574 | 29 | 8450175.4172 | 4437628.1353 |
| 4 | 8449675.1371 | 4437897.7953 | 17 | 8450237.3907 | 4437938.6196 | 30 | 8450170.4559 | 4437620.0662 |
| 5 | 8449689.0641 | 4437924.0356 | 18 | 8450243.6776 | 4437935.1332 | 31 | 8450175.4281 | 4437616.7539 |
| 6 | 8449768.5113 | 4438063.6500 | 19 | 8450327.2787 | 4437889.0378 | 32 | 8450132.3938 | 4437542.7386 |
| 7 | 8449778.9348 | 4438082.3032 | 20 | 8450229.3143 | 4437708.9699 | 33 | 8450038.6411 | 4437596.3379 |
| 8 | 8449793.8975 | 4438108.2397 | 21 | 8450218.7013 | 4437689.8983 | 34 | 8449971.9812 | 4437636.8916 |
| 9 | 8449804.0005 | 4438126.7698 | 22 | 8450210.0213 | 4437675.3877 | 35 | 8449966.2513 | 4437640.3775 |
| 10 | 8449810.9446 | 4438138.4729 | 23 | 8450206.5304 | 4437669.5520 | 36 | 8449965.2585 | 4437640.9674 |
| 11 | 8449823.5314 | 4438161.1801 | 24 | 8450190.8731 | 4437643.3771 | 37 | 8449857.4430 | 4437705.0283 |
| 12 | 8449836.8927 | 4438185.5804 | 25 | 8450186.2116 | 4437645.9649 | 38 | 8449696.5533 | 4437792.7250 |
| 13 | 8449897.0283 | 4438158.9239 | 26 | 8450181.5705 | 4437638.6343 | 39 | 8449651.5593 | 4437816.2554 |

սպասարկման գրասենյակ Կ.Տ

**Նոտարական ակտի կոդ:** 453-20181009-37-3089783
**Նոտարական ակտի գաղտնագիր:** FZN844

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան
Երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի իննին

**«ԷԼԵԿՏՐԱՄԵՔԱՌ»** բաց բաժնետիրական ընկերությունը, հասցե՝ մարզ Արարատ, քաղաք Մասիս, 0801, գրանցման համար՝ 77.130.00244, ՀՎՀՀ՝ 03800116, ի դեմս տնօրեն՝ **ԷԴՈՒԱՐԴ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ**, ծնված՝ 18/01/1953թ-ին, ՀԾՀ՝ 2801530379, անձնագիր՝ AM0622686, տրված՝ 004-ի կողմից, 01/02/2012թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԿՈՄԻՏԱՍԻ Պ., 7 Շ, 28ԲՆ, որի անունից 08.10.2018թ. վավերացված լիազորագրով հանդես է գալիս **ԻՌԱ ՍԵՐԳԵՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**, ծնված՝ 31/10/1960թ-ին, ՀԾՀ՝ 8110600050, անձնագիր՝ AN0579522, տրված՝ 016-ի կողմից, 23/07/2013թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ՓԱՓԱԶՅԱՆ Փ., 21 Շ, 26ԲՆ, այսուհետ՝ **«Վարձատու»** և **«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, հասցե՝ Երևան, Աբովյան փողոց, 42-2, գրանցման համար՝ 271.110.01887, ՀՎՀՀ՝ 01222567, ի դեմս տնօրեն՝ **ԱՍԱՏՈՒՐ ՄԱՐԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ**, ծնված՝ 03/04/1972թ-ին, ՀԾՀ՝ 1304720085, նույնականացման քարտ՝ 007355209, տրված՝ 010-ի կողմից, 09/03/2016թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱՅԳԵՍՏԱՆ 9 Փ., 21 Շ, 5ԲՆ, որի անունից 25.09.2018թ. վավերացված լիազորագրով հանդես է գալիս **ԱՐՍԵՆ ԱԶԱՏԻ ՄՀԵՐՅԱՆԸ**, ծնված՝ 06/10/1974թ-ին, անձնագիր՝ 005133251, տրված՝ 005-ի կողմից, 20/05/2014թ-ին, հաշվառված՝ Երևան, Նանսենի փողոց, 19 շենք, բնակարան 74, այսուհետ՝ **«Վարձակալ»**, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

**1.1.** Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանը հանձնել **Մարզ Արարատ, համայնք Մասիս ք. Երկաթուղայինների փողոց, 4 /չորս/** հասցեում գտնվող անշարժ գույքից ըստ հատակագծի՝ **432.66քմ** /չորս հարյուր երեսուներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերրորդական/ մակերեսով տարածքը, այսուհետ՝ **«Օբյեկտ»**, իր կանոնադրությանը համապատասխան գործունեություն իրականացնելու համար, իսկ Վարձակալը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված կարգով և չափով վճարել վարձավճար:
**Օբյեկտի տեղակայման սխեման բերված է սույն պայմանագրին կից հատակագծում, որը դրա անբաժանելի մասն է:**
**1.2. Սույն պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով:**
**1.3.** Օբյեկտը հանձնվել է Վարձակալին **01/10/2018 /մեկը հոկտեմբերի երկու հազար տասնութ/ թվականին:**
**1.4.** Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Վարձատուն կորցնում է Օբյեկտից օգտվելու իրավունքը:
**1.5.** Սույն պայմանագրի գործողության ընթացքում Օբյեկտի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
**1.6.** Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1. կետում նշված Օբյեկտը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:
**1.7.** Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի՝ հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:
**1.8.** Օբյեկտի վարձակալության հանձնելը՝ հիմք չէ դրա նկատմամբ իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:
**1.9.** Պայմանագիրը կնքելու պահին օբյեկտը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի (կալանքի) տակ չի գտնվում համաձայն Հայաստանի հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևան տարածքային ստորաբաժանման կողմից 08/10/2018թ տրված N ՄՏ-08102018-03-0300 միասնական տեղեկանքի:
**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ:** 58367.67քմ. շենք շինություններից՝ 229.9քմ. Տրանսպորտային բաժին, 5111.6քմ. Վարչական շենք, 895.5քմ. ճաշարան, 41500.6քմ. Պահեստ, 2881.2քմ. Պահեստ, 1644.6քմ. Մեխանիկական ցեխ, 1543քմ. Պահեստ, 950.9քմ. Լիցքավորման կետ, 370.5քմ. Պահեստ, 22.56քՄ. Տեղամասային կետ, 34քմ. Կշռատուն, 47.52քմ. Պահակային շների պահպանման շենք, 8.08քմ. Պահակատուն, 19.19քմ. Գործիքների պահպանմամ սենյակ, 57.92քմ. Ենթակայան, 12.32քմ. Պահակատուն, 73.6քմ. Պոմպակայան, 17քմ. Տեղամասային կետ, 77,68քմ. Փակ ջրավազան, 74.8քմ. Պոմպակայան, 42.08քմ. Հրշեջ կետ, 68.8քմ. Ավտոտնակ, 52.4քմ. Երթակարգավարման կետ, 8.24քմ. Պահակատուն, 18.72քմ. Տեղամասային կետ, 870քմ. ավտոմեքենաների Տ.Ս.Կ, 262քմ. Վարչական շենք, 133.12քմ. Կենցաղի տուն, 75.12քմ. Ավտոտնակ, 32.8քմ. Պահեստ, 19.2քմ. Տեղամասային կետ, 42.48քմ. Տեղամասային կետ, 98.88քմ. Ջրավազան, 139.84քմ. Ենթակայան, 18.72քմ. Պահակատուն, 29.04քմ. Տեղամասային կետ, 200.16քմ. Կարի արտադրամաս, 143.6քմ. ծածկ, 540քմ. պարիսպ:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. *Վարձատուն իրավունք ունի՝*
**2.1.1.** Պահանջել Վարձակալից Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:
**2.1.2.** Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը:
**2.1.3.** Եթե Վարձակալն Օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:
2.2. *Վարձատուն պարտավոր է՝*
2.2.1. Օբյեկտը Վարձակալին հանձնել պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մեկ օրվա ընթացքում՝ հանձնման-ընդունման

ակտով: Նշված ակտը պայմանագրի անբաժանելի մասն է:

**2.2.2.** Մեկամսյա ժամկետում քննարկել Օբյեկտի օգտագործման նպատակի փոփոխման, ինչպես նաև դրա վերանորոգման և վերասարքավորման վերաբերյալ՝ Վարձակալի դիմումները:

**2.2.3.** Իրեն հայտնի դառնալուն պես, Վարձակալին անհապաղ գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված Օբյեկտը հիմնական վերանորոգման կամ քաղաքաշինական նկատառումներով քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

**2.2.4.** Սույն պայմանագրով վարձակալվող Օբյեկտի իրավաբանական հասցեի ձևակերպման համար Վարձակալին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր:

**2.2.5.** Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

**2.2.6.** Օբյեկտը Վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով /տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն/:

**2.2.7.** Իր հաշվին կատարել Օբյեկտի հիմնական վերանորոգումը:

**2.2.8.** Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ Երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավի իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին:

**2.2.9.** Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը:

**2.2.10.** Որևէ կերպ չսահմանափակել Օբյեկտից օգտվելու՝ Վարձակալի իրավունքները և չկատարել գործողություններ, որոնք կարող են հանգեցնել նման սահմանափակման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի սահմանափակումն առաջանում է լիազորված պետական մարմինների կարգադրությունների կամ սույն պայմանագրի գործողության ընթացքում գործող կամ ուժի մեջ մտնող օրենսդրական և այլ իրավական ակտերի հետևանքով:

**2.3.** *Վարձակալն իրավունք ունի՝*

**2.3.1.** Պահանջել Վարձատուից իրեն տրամադրելու Օբյեկտի պատկանելիքներն ու փաստաթղթերը:

**2.3.2.** Օբյեկտի օգտագործմանը ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

**2.3.2.1.** Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

**2.3.2.2.** Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերություններ վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը:

**2.3.2.3.** Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

**2.3.4.** Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Օբյեկտի վիճակը վատթարացել է:

**2.3.5.** Սույն պայմանագրի 2.2.7. կետում նշված Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու պարտականությունը չկատարելու դեպքում՝

**2.3.5.1.** Կատարել անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին

**2.3.5.2.** Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը:

**2.3.5.3.** Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

**2.3.6.** Սույն պայմանագրի 2.2.8. կետում նշված պարտականությունը Վարձատուի կողմից չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը:

**2.4.** *Վարձակալը պարտավոր է՝*

**2.4.1.** Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

**2.4.2.** Ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար՝ սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը /վարձավճարը/:

**2.4.3.** Օբյեկտը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Օբյեկտը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:

**2.4.4.** Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Օբյեկտն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը:

**2.4.4.1.** Ապահովել Օբյեկտի ճարտարագիտական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

**2.4.5.** Առանց Վարձատուի գրավոր համաձայնության՝ Օբյեկտում չկատարել փակ և բաց լարանցումներ, չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ ու վերասարքավորումներ: Վարձատուի կողմից Վարձակալի կատարած Օբյեկտի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը պետք է իր նախկին տեսքին բերվի Վարձակալի հաշվին և Վարձատուի որոշմամբ միակողմանիորեն նախանշված ժամկետում:

**2.4.6.** Վարձակալված տարածքներում պահպանել սանիտարա-հակահամաճարակային, պետհրշեջվերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու իր վարձակալած Օբյեկտի նկատմամբ:

**2.4.7.** Վարձատուի կողմից որոշակիորեն նախանշված ժամկետներում ազատել տարածքները կապված շենքի կամ դրա մի մասի կառուցվածքների /կոնստրուկցիաների/ վթարային վիճակի, շենքը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ:

**2.4.8.** Օբյեկտը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում, ինչպես նաև մշտապես պատշաճ վիճակում պահպանել շենքի ճակատային մասերը:

2.4.9. Վարձատուին անմիջապես տեղեկացնել ամեն մի վնասվածքի, ինչպես նաև վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի, ինչպես նաև Օբյեկտի հետագա քանդման կամ վնասման կանխարգելման ուղղությամբ:
2.4.10. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ (գրավի, պայմանագրեր, իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ Օբյեկտի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում): Առանց նշված համաձայնության Վարձակալի կողմից նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը պայմանագիրը միակողմանիորեն լուծելու հիմք է:
2.4.11. Ապահովել Վարձատուի և Օբյեկտի սեփականատիրոջ ներկայացուցիչների անարգել մուտքն Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար:
2.4.12. Ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված շենքի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարման հետ:
2.4.13. Օբյեկտն ազատելու ժամանակ այն հանձնել ակտով՝ սարքին վիճակում, հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:
2.4.14. Սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված Վարձակալի գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգ են սպառնում Օբյեկտին, վարձակալված տարածքի բնապահպանական և սանիտարական իրավիճակին:

### 3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

**3.1. Օբյեկտի օգտագործման համար ամսական վարձավճարը կազմում 130.000 /մեկ հարյուր երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ ներառյալ հարկերը:**
3.2. Վարձավճարի մուծման ժամկետը վրա հասնելու պահից քսանօրյա ժամկետում Վարձակալի կողմից այն չմուծելու դեպքում Վարձատուն իրավունք ունի պահանջել Վարձակալից մուծելու պարտքի գումարը:
3.3. Վարձավճարի չափը ենթակա չէ միակողմանի փոփոխման:

### 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի պայմանները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում մեղավոր կողմը պարտավոր է փոխհատուցել պատճառված վնասները:
4.2. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:
4.3. Վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության հանձնված Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Օբյեկտը զննելիս կամ պայմանագիր կնքելիս կամ Օբյեկտը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:
4.4. Առանց Կողմերի մեղքի տեղի ունեցած յուրաքանչյուր վթարի դեպքում, որը հանգեցրել է Օբյեկտի վնասմանը, Կողմերը համատեղ մասնակցում են դրա հետևանքների վերացմանը:
4.5. Եթե վթարը տեղի է ունեցել Կողմերից մեկի մեղքով, որը հանգեցրել է Օբյեկտի վնասմանը, ապա մեղավոր Կողմը վերացնում է դրա հետևանքներն իր հաշվին և փոխհատուցում է մյուս Կողմին պատճառված վնասը:

### 5. Պայմանագրի փոփոխումը, լուծումը, գործողության դադարումը

5.1. Պայմանագրի գործողությունը դադարում է դրա ժամկետն ավարտվելուց հետո, ինչպես նաև Կողմերի համաձայնությամբ սահմանված ցանկացած այլ ժամկետում: Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները Կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում՝ լրացուցիչ համաձայնագրերով:
5.2. Վարձատուն կարող է միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե՝
5.2.1. Գոյացել է պայմանագրով նախատեսված վարձավճարի երեք ամսից ավելի պարտք՝ անկախ դրա հետագա մուծումից: Պայմանագրի լուծումը Վարձակալին չի ազատում վարձավճարի պարտքի մարման պարտականությունից:
5.2.2. Վարձակալի կողմից երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ապահովվել Վարձատուի կամ նրա ներկայացուցիչների անխոչընդոտ մուտքն Օբյեկտ՝ այն զննելու և ստուգելու համար:
5.2.3. Առանց Վարձատուի գրավոր համաձայնության՝ Օբյեկտն ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մաս-մաս տրվել է Նոր ենթավարձակալության կամ հանձնվել է այլ նպատակով օգտագործման, կամ ենթավարձակալության իրավունքը դրվել է գրավ կամ ներդրվել է այլ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում:
5.2.4. Վարձակալը դիտավորյալ կամ անզգուշորեն վատթարացրել է Օբյեկտի կամ դրա ինժեներական սարքավորումների վիճակը:
5.3. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝
5.3.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:
5.3.2. Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս դրանք չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, Օբյեկտը զննելիս կամ դրա սարքինությունն ստուգելիս:
5.3.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

## 6. Վարձակալած Գույքի բարելավումները

**6.1.** Վարձակալած Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

**6.2.** Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

**6.3.** Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

**6.4.** Վարձակալած Օբյեկտի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր )

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

## 9. Այլ պայմաններ

**9.1.** Անվանման, տեղի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ Կողմերի վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

**9.2.** Եթե Օբյեկտը, Վարձակալի մեղքով, ծառայության ամորտիզացիոն ժամկետից շուտ դառնում է նպատակային օգտագործման համար ոչ պիտանի, ապա Վարձակալը Վարձատուին փոխհատուցում է դեռևս չմուծված վարձավճարը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մյուս վնասները՝ սկսած այն պահից, երբ հայտնաբերվել է Օբյեկտի ոչ պիտանի լինելու փաստը՝ մինչև 1.2 կետում նշված պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

**9.3.** Եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո Օբյեկտի վիճակը նախատեսվածից վատթարացել է, ապա Վարձակալը Վարձատուին փոխհատուցում է հասցված վնասը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**9.4.** Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:

**9.5.** Վարձակալի գույքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

**9.6.** Պայմանագիրը կազմված է հայերենով, չորս օրինակներից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, մեկ օրինակը մնում է նոտարի մոտ, իսկ մեկ օրինակը ներկայացվում է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը:

## 10. Կողմերի ստորագրությունները

Վարձատու Լ/Ա

Վարձակալ Լ/Ա

Երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի իննին, պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության «Երևան» նոտարական տարածքի նոտար՝ Նոնա Գասպարյանիս կողմից: Կողմերը պայմանագիրն ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև (իրավաբանական անձի) իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքներն ստուգված են: ՀՀ ՔՕ 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից բխող իրավունքներն ենթակա են գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումում՝ սույն պայմանագրի ստորագրման օրվանից [illegible] աշխատանքային օրյա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում N 5665

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար [illegible]նհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար՝ Նոնա Խաժակի Գասպարյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի
2011թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն հրամանի

«20» 09 2018թ.

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՍԽԵՄԱ

Ենթավարձակալ՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ
(անուն, ազգանուն, (անվանում))

մարզ ԱՐԱՐԱՏ քաղաք Մասիս աւսցե Մասիս Կայարան արտ.հանգ. Երկաթուղայինների փող. թիվ 4




Ենթավարձակալ՝ ընդ. S=432.66քմ

ԱՁ Ռուստամ Մաթևոսյան
(անվանում)

N 01Ա911077
(պետական գրանցման համար)

Կատարող՝
(ստորագրություն)

Ռ. Մաթևոսյան
(անուն,ազգանուն)

Որակավորման վկայականի համար N 0268 տրման ամիս, ամսաթիվ «26» Մարտ 2013թ.

AEG SERVICE

# ԷՅ·Ի·ՋԻ·ՍԵՐՎԻՍ ՍՊԸ



28667

# Պայմանագիր

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՈՉ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՌՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՑԱԾՐ ՃՆՇՄԱՆ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԱԶԱՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**









## ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՈՉ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՌՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՑԱԾՐ ՃՆՇՄԱՆ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԱԶՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

### ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 11-498

ք.Երևան «06» 06 2022 թ.

«Հաստոց և Ձուլ» ՍՊԸ
(կազմակերպության, ծառայության անվանումը)

(այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրեն
(պաշտոնը, անուն, ազգանուն)
Ասատուր Ասատրյան, որը

գործում է կանոնադրության հիման վրա և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊ Ընկերությունը՝ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս Ընկերության Գլխավոր տնօրեն Արման Նալբանդյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է մատուցել Պատվիրատուի ցածր ճնշման գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների տեխնիկական սպասարկման և կարգաբերման ծառայություններ /հերթական և արտահերթ վթարային սպասարկում/ այսուհետ՝ Ծառայություններ:

1.2 Պատվիրատուի ցածր ճնշման գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների տեսակը և քանակը սահմանվում են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածում:

1.3 Ծառայությունները ներառում են՝

28667

ա/ Հավելվածով սահմանված ցածր ճնշման գազատար խողովակների զննում օծառափրփուրով կամ գազի արտահոսք որոնող սարքով, զոդակարերի կիպության ստուգում, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացում:

բ/ Հավելվածով սահմանված գազի կարգավորիչ կետի (ԳԿԿ ճԿ) տեխնիկական սպասարկում և կարգաբերում:

գ/ Հավելվածով սահմանված գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգում, տեխնիկական սպասարկում և կարգաբերում /մինչև գազայրիչ/

1.4 Պայմանագրի 1.3 կետում նշված հերթական Ծառայությունները Կատարողի կողմից իրականացվում են հետևյալ պարբերականությամբ */ընդգծել/

- ամիսը մեկ անգամ
- երկու ամիսը մեկ անգամ
- եռամսյակը մեկ անգամ

*Եռամսյակ է համարվում ֆինանսական տարվա եռամսյակը*

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն Պայմանագրի գինը Պայմանագրի գործողության ողջ ընթացքում մատուցված Ծառայությունների համար կազմում է 162648 (գումարը թվերով)

հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր քառասունութ

ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

2.2 Պայմանագիրը կնքելուց հետո Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պատվիրատուն կարող է վճարել կանխավճար, իսկ պայմանագրի 2.1 կետով նախատեսված գումարի մնացած մասը Կատարողին վճարվում է մատուցված ծառայությունների վերաբերյալ կազմված հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրերի հաստատումից /ստորագրումից/ հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

2.3 Պատվիրատուի կամ նրա ներկայացուցչի կողմից համապատասխան փաստաթղթերի (հանձնարարական ամփոփագիր, մատուցված Ծառայությունների հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր) հաստատումը (ստորագրումը) նշանակում է Պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների ընդունում:

2.4 Պատվիրատուն Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցելու եղանակով:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Կատարողը պարտավոր է՝**

3.1.1 Ծառայությունները մատուցել Պատվիրատուի իրավաբանական և/կամ գործունեության հասցեում՝ գ. Մասիս Երկաթուղային 4 :

3.1.2 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, 1.4 կետում նշված պարբերականությամբ, ՀՀ օենսդրության համապատասխան:

3.1.3 Պատվիրատուի գազամատակարարումը դադարեցվելու դեպքում Պատվիրատուի հետ կատարել վերջնահաշվարկ:

3.1.1 Սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածում նշված ցածր ճնշման գազատար խողովակների և գազօտագործող սարքավորումների թերություններ, անսարքություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին պատշաճ ծանուցել Պատվիրատուին:

3.1.5 Ծառայությունները մատուցել անձամբ:

3.1.6 Պատվիրատուի պատշաճ հայտի հիման վրա մատուցել արտահերթ վթարային սպասարկում:

**3.2 Պատվիրատուն պարտավոր՝**

3.2.1 Պահպանել գազասպառման համակարգի շահագործման անվտանգության կանոնները ու պահանջները, ինչպես նաև, օգտագործվող սարքավորումների գործարանային հրահանգների պահանջները:

3.2.2 Գազապայման համակարգում չօգտագործել ինքնաշեն սարքավորումներ:

3.2.3 Արգելել բնական գազից օգտվելու անվտանգության կանոնների և պահանջների վերաբերյալ հրահանգավորում չանցած անձանց՝ գազապարող համակարգը շահագործելուց:

3.2.4 Կատարողին տրամադրել՝ ցածր ճնշման գազատար խողովակներում և գազօգտագործող սարքավորումներում հայտնաբերված թերությունների, անսարքությունների վերացման համար անհրաժեշտ, փոխարինման ենթակա սարքերը, պահեստամասերը:

3.2.5 Կատարողին ներկայացնել ցածր ճնշման գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների նախագծման և կատարման տեխնիկական բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև հետագայում դրանցում կատարված փոփոխությունները՝ փոփոխությունները կատարելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

3.2.6 Թույլատրել Կատարողի աշխատակիցների (ներկայացուցիչների) մուտքը կազմակերպության տարածք և չխոչընդոտել նրանց կողմից իրենց պարտականությունների կատարմանը:

3.2.7 Գազամատակարարման դադարեցման ակտի առկայության դեպքում 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին ներկայացնել ակտի կրկնօրինակը:

3.2.8 Ողջամիտ ժամկետում վերացնել ցածր ճնշման գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումներում տեխնիկական սպասարկման Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի կողմից հայտնաբերված և իրեն ծանուցված խախտումները կամ թերությունները՝ ապահովելով դրանց հուսալիությունը, ինչպես նաև աշխատանքի, մարդկանց կյանքի և գույքի անվտանգությունը:

3.2.9 Սույն Պայմանագրով սահմանված ժամկետներով և կարգով վճարել Կատարողին մատուցած Ծառայությունների համար:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Ինքնուրույն որոշել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մասնագետների քանակը և որակավորումը:

3.4 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.4.1 Յետևել Կատարողի կողմից կատարվող աշխատանքների գործընթացին և որակին՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.4.2 Անհրաժեշտության դեպքում ստանալ արտահերթ վճարային սպասարկում:

## 4. ԱՆՅԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2022 թվականի 06 «06»-ից և գործում է մինչև 2023 թվականի 06 «06»-ը:

5.2 Կանչերն ընդունվում են աշխատանքային օրերին և ժամերին ________ հեռախոսահամարով:

5.3 Պատվիրատուի պարտավորությունների չկատարման արդյունքում առաջացած վնասների ռիսկը կրում է Պատվիրատուն:

5.4 Սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Յավելվածով սահմանված ցածր ճնշման գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների քանակի փոփոխության դեպքում կատարվում է սույն պայմանագրով սահմանված Ծառայությունների գումարի վերահաշվարկ:

5.5 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Պատվիրատուի ցածր ճնշման գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների նորոգումների, վերականգնման, վերակառուցման աշխատանքների իրականացումը Պատվիրատուի կողմից այլ անձանց պատվիրելու և վերջիններիս կողմից կատարելու դեպքում, Կատարողը հնարավոր հետևանքների համար պատասխանատվություն չի կրում:

5.7 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «[illegible]» ՍՊԸ | «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ |
| [illegible] | ՀՀ, ք. Երևան, Աղոնցի 10 |
| [illegible] | Հեռ.՝ (010) 29-75-27, 20-94-60 |
| Հեռ. 077 505063 | Էլ. փոստ aegias@mail.ru |
| ՀՎՀՀ 01222567 | ՀՎՀՀ 00930884 |
| | Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ |
| | Հ/Հ 24701-00768150010 |
| | Գլխավոր տնօրեն՝ |
| | Ա. Նալբանդյան |

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ





# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Քարտի համար 0390629

Անուն, Ազգանուն Ս. Շահումյանի [illegible] "[illegible]"

Հասցե գ. Մասիս, Երևանյան-փող. 4

*Հավելված №2*
*Հայաստանի Հանրապետության հանրային*
*ծառայությունները կարգավորող հանձնաժողովի*
*2017 թվականի մայիսի 31-ի N218Ն որոշման*

## ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

[illegible] 10 04 2022 թվական
(կնքման վայրը)

Մատակարարը՝ [illegible]
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս [illegible]
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպառողը՝ [illegible]
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. **Մատակարարը պարտավոր է՝**

1) [illegible] հասցնում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.



6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի.

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները.

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ ով սահմանված ժամկետում և կարգով.

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ.

4. **Մատակարարն իրավունք ունի՝**

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

5. **Սպառողը պարտավոր է**

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում.

2) մատակարարվող էլեկտրական էներգիան օգտագործել ոչ կենցաղային նշանակությամբ.

3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը.

4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին

5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

6. **Սպառողն իրավունք ունի՝**

1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների.

2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար.

3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:



## 3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:

8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:

9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

10. Առևտրային հաշվառքի սարքի խափանման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:

11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:

15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

## 4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե սպառողի (բացառությամբ բնակչության) էլեկտրամատակարարման սխեմանապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:

17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

18. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու իոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:

19. Սպառողը (բացառությամբ բնակչության) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N6 հավելվածում ամրագրել՝

1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման.

2) էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:

20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում.

2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից.

3) եթե Սպառողը էլեկտրական էներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.

4) Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում.

5) Սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս էլեկտրական էներգիան սպառելու դեպքում.

6) Էլեկտրական էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:

21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում.

2) Էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Չանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:

23. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս էլեկտրական էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դադարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

## 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24. Սպառողի էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրարտեդակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

25. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

26. Սպառողի կողմից (բացառությամբ բնակչության) վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:

27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:

28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված №1) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:



## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

30. Եթե Սպառողի էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

31. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

32. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրաէներգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

## 7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

34. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաքքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Չանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

35. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

36. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

37. Սույն պայմանագրի 36-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

38. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով ժամկետով: Պայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե ԷՄՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի կնքում:

39. Սույն պայմանագրի 38-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի կնքման դեպքում ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Մատակարարի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:

40. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:



41. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

42. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում սույն պայմանագրին, ԷՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

43. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

44. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

45. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

46. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:

47. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

## 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝

1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.

2) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N2 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.

3) Սպառողի (ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը.

4) Սպառողի (ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը.

5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.

6) 0.4կՎ և բարձր լարման սպառողների (բացառությամբ բնակչության) համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը:



## 12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝

"ՀԷՑ" ՓԲԸ "ԱՐԱՐՍ" Մ/Ճ

"ՄԱՍԻՍ" ԷԼ. ՑԱՆՑ

Գտնվելու վայրը՝ Հ. ՄԱՍԻՍ ԱՐԴ. ՀԱՆԳՈՒՅՑ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ 11

Հեռախոս 060711446

Էլ. փոստ

ՀՎՀՀ 01520882

Հ/h

Բանկ "ԱՐԴՇԻՆԲԱՆԿ" ՓԲԸ

Գործունեության լիցենզիա N

ՄԱՍԻՍ ԷԼ. ՑԱՆՑԻ ԴԵՏ Զ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

(առկայության դեպքում)

Սպառող՝

ս Շավարշի թաղամաս "ԱԶԸ"

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝

գ. Մասիս, Երկաթգծ. 4

Ծանուցման հասցեն՝

Հեռախոս

Էլ. փոստ

Հեռախոս

ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում) 01222567

Բանկ Կոնվերս բանկ ՓԲԸ

Հ/h 1570005065330200

(ստորագրություն, անուն, ազգանուն)

*Հավելված N1*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հզորությունը 50 կՎԱ

լարումը 0,38 կՎ

տեղակայված է 1000 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան:

Սնումն իրականացվում է [illegible]

Գ-3165-Ի Կ/Լ [illegible]

Հաշվառքի սարքերը տեղադրված են 15/4 [illegible]

Մատակարար՝ ՄԱՍԻՍ ԷԼ. ՑԱՆՑԻ ԳԵՏ Զ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Սպառող Ի. [illegible]

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)



*Հավելված N2*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻԱԳԻԾ ՍԽԵՄԱՆ

Սնող ե/կ 3165 Գ/Կ-Ի Կ/Լ [illegible]

( Գե, Տե, օ.գ. անվանումը, հենարանի N)




Մատակարար՝ ՄԱՍԻՍ ԷԼ. ՑԱՆՑԻ ԳԵՏ Զ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Սպառող՝ Ի. [illegible]

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

*Հավելված N3*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂԻ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ (ՎԵՐՍՏՈՒԳԻՉ) ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | Հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք) | | | | | | | | | | Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | |
| | | տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | 3165496 | AH002073 | 5(7,5) | 0,38 | IV-2027 | | | 40 | | | | [illegible] |
| 2 | | СЭЧ 30 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |
| 12 | | | | | | | | | | | | |
| 13 | | | | | | | | | | | | |
| 14 | | | | | | | | | | | | |

| Հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք) | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվիչի | | | | | | | | | | |
| | տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 15 | | | | | | | | | | | |
| 16 | | | | | | | | | | | |
| 17 | | | | | | | | | | | |
| 18 | | | | | | | | | | | |
| 19 | | | | | | | | | | | |
| 20 | | | | | | | | | | | |
| 21 | | | | | | | | | | | |
| 22 | | | | | | | | | | | |
| 23 | | | | | | | | | | | |
| 24 | | | | | | | | | | | |
| 25 | | | | | | | | | | | |
| 26 | | | | | | | | | | | |
| 27 | | | | | | | | | | | |

Մատակարար՝ ՆԱԻՐԻ ԷԼ. ՑԱՆՑԻ ՊԵՏ
Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Սպառող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

*Հավելված N4*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂԻ) ՍՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ, ԼԱՐՄԱՆ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N ը.հ. | Սնման ուղղության անվանումը | Հասցեն | Էլեկտրա-ընդունիչների կարգը (I,II,III) | Սահմանա-զատման կետի լարումը (կՎ) | Առավելագույն թույլատրելի հզորություն (կՎտ ) | Աշխատանքային օրերի և ժամերի քանակը (ժամ) | Հայտարարված առավելագույն բեռը (կՎտ) աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | 3165496 | [illegible] | | 0,38 | 50 | 30/24 | 50 |
| 2 | | | | | | | |
| 3 | | | | | | | |



1. Սույն աղյուսակի 6-րդ սյունակը լրացվում է համաձայն սպառողին տրված տեխնիկական պայմանների: Տեխնիկական պայմանների բացակայության դեպքում 6-րդ սյունակը լրացվում է՝

1) 0.22 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի և անվանական լարման արտադրյալով.

2) 0.4 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման և հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆոր-մացիայի գործակցի արտադրյալով.

3) 6 (10) կՎ և բարձր լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման, հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի և լարման չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով:

2. Սույն աղյուսակի 4-րդ սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N1943Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրատեղակայանքների սարքվածքներին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգում նշված էլեկտրա-ընդունիչների կարգերի համաձայն:

Մատակարար՝
ՄԱՍԻՍ ԷԼ. ՑԱՆՑԻ ԳԵՏ
Զ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ
(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Սպառող՝

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

## Ա Կ Տ
## ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԵՏԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կողմերի սահմանազատման կետն է՝ 0,4 կՎ [illegible] [illegible] [illegible]:
2. Կողմերի էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման կետն է՝ ______ :
3. Սպառողի և ենթասպառողի էլեկտրատեղակայանքների սահմանազատման կետն է՝ ______ :

Մատակարար՝
ՄԱՍԻՍ ԷԼ. ՑԱՆՑԻ ՀԷՑ
Զ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ
(անուն, ազգանուն, պաշտոն)
(ստորագրություն)

Սպառող՝
[illegible]
(անուն, ազգանուն)
(ստորագրություն)





## 0,4 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անբաժանելի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտը, որը կազմվում է համաձայն ԷՄՕԿ-ով սահմանված կարգի:
2. Երբ նվազագույն բեռնվածքի ռեժիմներում տեխնիկապես անհնար է առևտրային հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքը, սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվարկվում է նվազագույն բեռնվածքի ամբողջ ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հզորության հիման վրա և ավելացվում առևտրային հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:
3. Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանազատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր, որի վերաբերյալ կազմում են երկկողմանի ակտ և կցում սույն պայմանագրին:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրաէներգիայի որակը խախտելու դեպքում պատճառները և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակահատվածը որոշվում են Մատակարարի կամ Սպառողի չափիչ սարքերի գրանցումներով, իսկ այդ սարքերի բացակայության դեպքում՝ համապատասխան հաշվարկներով, Մատակարարի և Սպառողի օպերատիվ փաստաթղթերի գրառումների հիման վրա: Այդ մասին Մատակարարը և Սպառողը կազմում են երկկողմանի ակտ:
5. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար Մատակարարը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
6. Սպառողի (բացառությամբ բնակչության) սարքավորումները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքները մատակարարի օպերատիվ ենթակայությանը հանձնելու դեպքում Կողմերը պարտավոր են այն իրականացնել ԷՄՕԿ-ով սահմանված՝ «Մատակարարի և Սպառողի (բացառությամբ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների» կարգով